

Pliny
44

Pliny

238

Пиццини Гри
Фабрико

4. Пнлу 1912

6-2

Գ. ԽՈԺԱԿ

ՏԱՐԱՊԱՆԻՔԻ ԳԻՆԵՐԸ

(ԲԱՆՏԻ ՅՈՒՇԵՐԻՑ)



1912

Խ. ԽՈԺԱԿ

Տարապանիքի գիները

2004

թագավորի Հայոց առաջնորդութ
Պատմութեա

44

Գ. Խ. Ա. Ժ. Ա. Կ.

Բայց խախած առ եմ Եմ :


1913 թ. Մայիս

Տ. Զաքարյան

ՍԱՌԱՊԱՆՔԻ ԳԻՇԵԲԸ

ԲԱՆՏԻ ՅՈՒՆԵՖԻՑ

33



Տ. Զաքարյան

1912

Կ. Պ. (Պատմութեա)

3677

10424



44-2014

(8845-5d
83055-~~seh~~

հջ. 44

ՏԱՐԱՊԱՆՔԻ ԳԻՇԵՐԸ



ԲԱՆՑԻ ՅՈՒՇԵՐԻՑ

1

Տասը-տասնհինգ օր էր լուր էր պտառւմ, որ Ռուսակի բանտում եղած բոլոր Դաշնակցական համարւող կալանաւորներին պիտի տանեն Նօվօչերկասկ :

Բանտապետի գրեթէ բոլոր օգնականները, բացի նիհար, ժանտաղէմ և կանացի ձայնով Վուկինից, — համակիր էին մեզ :

Համակիր : Զկարծէք թէ համակիր էին մեր ուղղութեան, մեր գաղափարներին : Ամենեւին : Դրսում մեր բարեկամներն ու ազգականները օղի, գինի էին հրամցնում, ճաշեր էին տալիս, ափերի մէջ դրամ խօթում . . .

Ահա համակրութեան գաղտնիքը :

Յաճախ մտածում էի, թէ արդեօք ի՞նչ կը լինէր Թիւրքիայում և Ռուսիայում բանտարկւածների վիճակը, եթէ պաշտօնեաների կաշառւելու սովորութիւնը չլինէր . . .

Այո՛, չկայ չարիք առանց բարիքի :

Բարեկամ ու համակիր էին մեզ նաև ստորին

Երեկոյեան ժամը 7-ին արդէն բոլորս պատրաստ էինք : Ամէն մարդ հաւաքել էր իր ունեցածը , աւելորդ իրերը և անկողինները գուրս ուղարկել ծանօթներին ու ազգականներին : Մեծ-մեծ պայուսակներն արդէն կապուած էին և ամուր փակւած :

Ներս մտան բանտի վարչութեան անդամները : Օրէնք է , որ երբ վարչութեան անդամներից մէկը—բանտապետը , աւագ կամ կրտսեր օգնականները ներս մտնեն , բանտարկեալները պարտաւոր են ոտքի կանգնել :

Այդ անախորժութիւնից խուսափելու , այդ գըռեհիկ տգէտ ու ապուշ արարածներին իբր յարգանք՝ ոտքի չկանգնելու համար , մենք որոշել էինք այնպէս անել , որ և մեր արժանապատւութիւնը փրկւի ամենօրեայ ունահարութիւնից , և այդ գաղաններն առիթ չունենան որ է նկատողութիւն անելու : Այդ պատճառով ամէն անդամ , երբ դրանցից որ և է մէկը պիտի մաներ մեր խուցը , երբ դրան ահազին երկաթէ սողնակից կախւած խոշոր կողպէքն աղմուկով սկսում էին բանալ , մենք բոլորս էլ սկսում էինք ման գալ սենեակում , որպէս զի ներս եկողը մեղ արդէն ոտքի վրայ գտնի :

Ամէնից առաջ ներս մտաւ մեր «բարեկամ» երիտասարդ օգնական Բուլիգինը , ժալիալ երեսին . նրա ետեւից՝ ներքինիակերպ վօսկինը , յետոյ կարճ

ու կլոր կազնակօվը և վերջը բանտապետը — չոք
ու երկարաձիգ :

— Պատրաստ էք, — հարցրեց վերջինս տիրա-
կան շեշտով :

— Այո՛, — պատասխանեցին կալանաւորներից
մի քանիսը :

Բանտապետը մի բաւական երկար ճառ խօսեց.
յայտնեց իր շնորհակալութիւնները, որ մենք մեզ
«լաւ ենք ալահել», տեղի չենք տւել ոչ մի ան-
կարգութեան ու դժգոհութեան. խոստացաւ շատ
լաւ կարծիք զրել մեր մասին մեր նոր բանտի վար-
չութեանը և այդ թղթի հետ ուղարկել նաեւ Բա-
գուի, Թիֆլիսի, Գանձակի, Երեւանի և այլ բանտե-
րի վարչութիւնների ուղարկած շատ լաւ կարծիք-
ները մեր մասին, ևայլն :

Իսկ այդպիսի լաւ կարծիք զրելը շատ մեծ
նշանակութիւն ունի. նոր բանտի վարչութիւնն
առաջին օրից իսկ սկսում է լաւ վարւել:

Սակայն, աւա՛ղ, այդպէս չեղաւ մեր վերա-
բերմամբ, որովհետեւ մեր քննիչը ձեռք էր ա-
ռել արտակարող միջոցներ :

Վերջապէս հատ-հատ կարդալով մեր անուն-
ները, ստուգելով մեր բանտային առմաները, մեզ
կանգնեցրին չորս-չորս և իջեցրին բանտի բակը :

Այնտեղ էին արդէն մեր բոլոր միւս ընկեր-
ները, որոնց մէջ և Պոլսեցի Սելեանը, 1907ին
եալտայում 18 տարւայ տաժանակրութեան դա-
տապարտւած, հաստ շլթանները ոտքերին, բայց

բիւրեղանման մանկական ժաղիտը յաւէտ շրթներին, մի՛շտ կատակելու պատրաստ, մի՛շտ համով հոտով սրախօսութիւնները լեզւի ծայրին :

Բակումն էլ պահեցին 2-3 ժամ. կատարեցին ուսւական թղթամոլ ձեւականութիւնները, մանրակրկիտ խուզաքրկութեան ևնթարկեցին թէ մեզ և թէ մեր ունեցածները :

Ժամը 10ին (երեկոյեան) բանտի դարպասի փոքրիկ ու կլորագլուխ գոնով մեզ մէկ մէկ հանեցին փողոց և կրկին չորս-չորս կանգնեցրին : Մենք ընդամէնը 78 հոգի էինք :

Փողոցում մի այլ տեսարան էր :

Մեզ շրջապատեցին մի շարք հետիոտն կօզակներ, որոնց պետը հրամայեց իսկոյն լցնել հրացանները : Այդ հետեւակներին էլ շրջապատեցին մի շարք ձիաւոր կօզակներ, որոնք նոյնպէս հրաման սաւացան իրենց գնդապետից լցնել զէնքերը և պատրաստ պահել :

Եւ ձիաւոր կօզակները զրին իրենց հրացանների կոթերը ծնկներին և աջ ձեռքով բռնեցին փողերից, խողովակների բերաններն ուղղելով դէպի վեր :

Ձիաւոր կօզակներին շրջապատեցին հետեւակ ոստիկանները, իսկ դրանց էլ ձիաւոր ոստիկանները :

Եւ այսպիսով՝ մենք գտնւում էինք չորս շարք զինւած մարդկանց երկաթէ օղակի մէջ :

Առաջ անցաւ զօրքերի գնդապետը, հաստ, մտւու և կարմիր երեսով, միջահասակ մի սովորական էակ : Այդպիսի մարմնի տէրը չէ կարող չար

մարդ լինել . բայց քննիչի թուղթն այնքան էր սարսափիեցրել խեղճին , որ երկիւղից դիմում էր ծայրայեղ միջոցների և աւելի չափ էր ցոյց տալիս իրեն , քան իսկապէս էր :

— Ոչ ոք չարժւի , — հրամայեց նա զինւորական շեշտով , մի ամենաչնչին շփոթ ճանապարհին ձեր կողմից կամ դրաից , և ես կը հրամայեմ իսկոյն կոստորեն բոլորիդ :

Գնդապետի այդ խօսքերը գըեթէ ոչ մի ազդեցութիւն չարին բանտարկեալների վրայ . մեր ջղերն արդէն քարացել , մենք մի աեսակ անզգայացել էինք : Մեղ համար միեւնոյնն էր . ինչ որ պատահելու է . թող օր առաջ պատահի , մտածում էր մեզանից ամէն մէկը :

Ռւ կարիճ գնդապետը , օդի մէջ շարժելով սուրը , պտացնելով գլխի չորս կողմը , հրամայեց .

— Հրացանները ուսերիդ դրէք . . .

Եւ հետեւակները գրին հրացաններն ուսերին , իսկ ձիաւորները պահեցին պատրաստ , առաջւայ պէս :

Մի անգամ էլ սուրը պտոյտ գործեց գնդապետի գլխի մօտերը , մի անգամ էլ բանտի լապտերների լոյսերն աղօտ ցոլացին պսպղուն պողպատի մէջ :

— Դանդաղ քայլել . — կրկին որոտաց գնդապետի ծայնը , կարծես ճապոնական պատերազմի դաշտում :

Եւ ահագին թափորը շարժւեց՝ դանդաղ , յամ-

րաքայլ, կարծես ծանրաբեռնւած լինէր վշտի հակերով և արցունքի բեռներով :

Այդ սպառազինւած գնդի առջեւից և կողքերից գնում էին ջահակիրները, թւով 24, Դրանք կողակներ էին, որոնց ձեռքին կային երկար ձողերի վրայ ամրացուած քարիւղէ ճրագներ՝ խոշոր պատրոյգներով։ Ճրագները գեղին պղնձից էին ու շարժական։ Նրանց լոյսը դժգոյն էր, մեռելին ուղեկցող կերոնների լոյսի պէս։

Ջրահապատ թափորը մութ գիշերին, դասարկ և ամայի փողոցներում՝ յիշեցնում էր ինձ տատիս պատմած հէքիաթներում նկարագրւած դեւերի ու սատանաների հարսանիքները։

Տարմւում էր դիւային թափորը, շարժւում դանդաղ, չափածոյ քայլերով։ Եւ քայլերի միօրինակ դոփիւնները արագ ծնւում նոյնպէս արագ մարում էին Ռոստովի լայն փողոցներում։

Հօկայական տարածութեան վրայ ոչ ոքի չէին թողնում անցուգարձ անել, կանգ առնել և նայել։ Կալանաւորներին շրջապատող չորս շարքերից էլ այն կողմ վիստում էին ծպտւած սստիկանների ու լրտեաների վոհմակներ։

Բոլոր կալանաւորներն իրենց պայուսակներն ու տոպգրակները դրել էին երկու խոշոր սայլերի վրայ և իրենք գնում էին առանց բեռի, թեթև։

Բանտից մինչեւ կայարան 4 կիլոմէթրի չափ տարածութիւն է։ Պէտք էր այդ ճամբան կտրել ռաքով։

Ես հիւանդ էի և բանտի բժշկից վկայական ունէի, որ ոտով չեմ կարող ճանապարհ գնալ : Խնդրեցի, որ իմ հաշւով կառք բերեն, թոյլ չտւին և նոյնիսկ վրաս խնդացին, բայց հրաւիրեցին նստել բեռների սայլի վրայ : Ճար չունէի, շունչս կարւում էր . ստիպւած բարձրացայ տոպրակների վրայ և նստեցի :

Սայլի վրայ կային և ուրիշ հիւանդներ : Այնտեղ էր նաեւ Յովհաննէս Մեդնիկեանը, որ նախ քան ձերբակաւելը, ութ ամիս արդէն զժանոցի հիւանդանոցումն էր եղել պառկած Աստրախանում : Այդ տեղից հանել և բանտ էին բերել : Նրա հիւանդութիւնը ուղեղի առաջտւական գրսացում էր (պարավիզի պրօքրէսիվ) և արդէն այնքան էր առաջացած այդ հիւանդութիւնը, որ խեղճ Յովհաննէսը ոչ ցուրտ էր զգում, ոչ տաք, ոչ քաղց ...

Ու սայլը շարժւում էր քարայատակ փողոցի միջով՝ բաւական մեծ աղմուկ հանելով և մեզ սոսկալի ցնցումներ պատճառելով : Ես ստիպւած էի պինդ բռնել Մեդնիկեանի մէջքից . որ վայր չընկնի :

Փողոցների երկու կողմում բոլոր աների դռներն ու լուսամուտները գոցւած էին : Երսեմն միայն որ և է լուսամուտից վարկենաբար երեւում էր մի հետաքրքիր զլուխ, որ իսկոյն և եթ չքանում էր : Մարդկանց զարմացրել, միաժամանակ և զարհուրանք էր պատճառել այս արտասովոր էտապը : Նրանք ամէն շաբաթ վկայ էին լինում 3-4 էտապի, կալանաւորները գնում են Ռուսովի փո-

դացներով չարան-շարան, անդադար, անվերջ. մեծ
է Մայք-Ռուսաստանը, անհամար են նրա կալա-
նաւորները : Նրանք տեսել էին քաղաքական յան-
ցաւորներ, բոկոտներ, գողեր, մարդասպաններ,
շղթայակապ տաժանակիրներ . բայց այսպիսի տա-
րօրինակ, այսպիսի սոսկալի էտապ երբեք չէին
տեսել :

Ու շւարած իրար հարցնում էին . ույս ի՞նչ
բան է» :

Գաղանիքը պարզ էր : Քննիչ Լիմինը գրել էր
լանտի վարչութեան և տեղական ոստիկանու-
թեան . «Աչքի առաջ ունենալով, որ դրանք բոլորը
շատ կարեւոր պետական յանցագործներ են, յանձ-
նաբարում եմ ձեռք առնել արտակարդ խիստ մի-
ջոցներ» :

Եւ ոստիկանութիւնն ու բանտային վարչութիւնը
սոսկացել էին : Նրանք համոզւած էին, որ մենք
բոլորս զարհուրելի էակներ ենք, բոլորս էլ ոմբա-
ձիգներ, ազրայիներ, գլուխ կարողներ . . . Որ
մեր դրսի ընկերները, ոռումբերով զինւած, պիտի
յարձակում գործեն կամ Ռուսակում կամ Նո-
վօչէրկասկում և մեզ փախցնեն 300-400 զինւոր-
ների ձեռքից :

Այդ պատճառով ահա մեր էտապն սատացել էր
այդքան սոսկալի, այդքան չարագուշակ կերպա-
րանք :

III

Մէկ ժամի չափ քայլելով, մեր դիւային թափառը
հաստ երկաթուղու կայարանը :

Հիւանդներիս իջեցրին սայլերից և խօսյն բոլո-
րի առպրակներն էլ տւին իրենց տէրերին :

Ստացանք բեռներս և կրկին չորս-չորս կանգնե-
ցինք :

Մեզ հետ կային բաւական թռւով շրջմոլիկներ,
հասարակ գողեր, անտուն բոկոտներ, որոնց զոյզ-
զոյդ իրար էին շղթայել թեւերից և մեզ հետ էտապ
հանել : Դրանց տանում էին մեր գծով դէպի թռւ-
սաստամի ներսերը, ամէն մէկին իր ծննդավայրը :
Զգեստները զզգզւած, կօշիկները ծակ, մարմնի այս
ու այն տեղից մերկ մսերը ցուցադրւած՝ — զրանք
բոլորն էլ թշւառութեան մի-մի մարմնացում էին :
Քաղցը, կեղտը, ծուլութիւնն ու հարբեցողութիւնը
դրանց գրեթէ բոլորին այլասերել, քայքայել էին .
մարդկային կերպարանքը չքացել, պատւի ու ար-
ժանապատւութեան վերջին նշոյներն անզամ անզարձ
կորել էին նրանց վրայից :

Դրանք բոլորն էլ մեզ «բարին» (աղա, պարոն)
էին անւանում, մի մակղիր, որ բաւական վաղուց
չէինք լսել բանակերում :

Մեզ կանգնեցրել էին կայարանի մեծ դարպասի
դիմացը և օգի ցուրտ հոսանքն անզազար թափան-
ցում էր մեր ոսկորները :

Դեռ մենք կրկնակօշիկ, վերարկու, ձմբան

դգեստներ ունէինք , հապա ի՞նչ էր այն խեզների վիճակը : Ցնցոտիների միջից աչքախփուկ խաղացող մարմնի այս ու այն մասերը ցուրտ քամու շնչից կարմրել , խեցգետնի գոյն էին ստացել : Նրանք սրթարթում և ամբողջ մարմնով դողում էին :

Նրանցից մէկը ծխախոտ ուզեց : Զափազանց մեծ վիշտ պատճառեց ինձ , որ անկարող եղայ այդ թշւառ էակի խնդիրը կատարել : Ծխող չէի . չունէի : Շարժւեցի դէպի առաջ , որ Պօզոսից մի ծխախոտ առնեմ . շարժումս նկատեց մի զինւորական և կոպտաբար , մի աղի հայհոյանք էլ հետը , հրամայեց չը շարժւել :

Արդէն ցրտից ընդարմացել . փայտացել էինք , երբ հնչեց գնդապետի ձայնը .

«Եստե՛լ» :

Մվ սարսափի . հոկտեմբերի 12ը , ծակող քամի , գետինը սառած , և մեղ հրամայում են նստել :

Ճար չը կայ . հրամայում են , պիտի նստես :

Այդտեղ մեղ օգնութեան հասան մեր տոպրակները : Դրինք բեռներս սառած գետնին և վրան նստեցինք :

Մեր բանը դիւրին էր , բեռներ ունէինք . իսկ ի՞նչ պիտի անէին միւսները :

Տէր Աստւած . նրանք իրենց ցնցոտիները դրին ուղղակի սառած գետնի վրայ և մարդկային մարմնի բաց-բաց մասերը կպան սառոյցներին . . .

Բրար շղթայւած զոյգերը չէին կարողանում ներդաշնակ շարժումներ անել . մէկը դանդաղ էր շարժ-

ւում, միւսն արագ, և անսկրտա շղթան ցաւեցնում
էր բազուկները : Ու սկսում էին փողոցային, գի-
նետան իւղալի հայնոյանքները . . .

Վերջապէս բոլորն էլ նստեցին :

Ինձնից ծխախոտ խնդրող բոկուսնը, որ կողքիս
էր նստած, փառաւորապէս գլուխը դրեց տոպըրակիս
մի ծայրին և աչքերը փակեց : Շղթայակից ընկերը,
մի ուրիշ բոկուսն, հարբեցողի տիպիք կերպարան-
քով, երկար հայնոյեց նրան, բայց ստիպուած եղաւ
բաւական թեքւել . որպէս զի Վասկան անհանգիստ
չէինք :

Եւ Վասկան քնեց, կարծես տաք գինետան
տախտակների վրայ լինէր պառկած :

Սպաների ուշադրութիւնը դարձաւ գէպի վա-
գոնները, գէպի եկող ու մեկնող գնացքները, որ
սակաւ չեն Ռոստովի պէս մի կենտրոնական վայ-
րում : Ու մենք սկսեցինք մի քիչ ազատ շունչ քա-
չել, չուրջերս նայել :

Նախ սկսեցինք խօսակցել կօզակների հետ : Իս-
կոյն երեւաց, որ «լաւ աղէք» են, ոռւսական լայն
ու բարի սրտով, խօսելու միշտ արամագիր :

Տաճնապետները շուտ-շուտ անց ու դարձ էին
անում և հնար չէր լինում երկար խօսելու, որ և է
միտք հասկացնելու :

Այնտեղ, 40-50 քայլ հեռաւորութեան վրայ,
խռնւած էր ժողովուրդը : Ռոստովի գրեթէ բոլոր
Հայերը հաւաքւել էին : Կիսաշրջանով կանգնած եր-
կաթուղու կայարանի մեծ մուտքի դիմաց, վզերը

ծուռ, թախիծը երեսներին, նրանք մեզ էին նայում:

Այստեղ էին բանտարկեալներից շատերի կիները, քոյրերը, մայրերը, եղբայրներն ու հայրերը: Մի քանիսս էլ ունէինք լոկ ծանօթներ, ընկերներ:

Այստեղ էլ Դրիգոր Առեմիչը, մի գինեվաճառ, որ նոր միայն մի ամիս առաջ արձակւած էր բանտից 15.000 ր. գրաւականով: Դրիգոր Առաւեմիչը մի Վրաստանցի հայ ծերուկ էր, որ ոչ մի լեզւով լաւ, անսխալ խօսել չէր իմանում: Դօմինօ խազալիս, հերթն իմանալու համար հաշիւ էր անում. «Ես էկաւ, դու էկաւ»: Մի խական հայ-քրիստոնեայ, միշտ ուրախ, միշտ կատակող, մանկան նման անբիծ ու մաքուր, ընկերասէր, իր բերանից պատառը կտրող ընկերին ուտեցնող:

Նա չէր վախենում, որովհետև բոլոր սպաներն ու կօգակները, նոյն իսկ բոլոր լրտեսները ճանաչում էին նրան: Ուտքով, ձեռքով նշաններ էր անում, կատակում, ծիծաղեցնում թէ՛ մեզ, թէ՛ ժողովրդին: Կանչում էր այս ու այն բանտարկեալին իր կնքած անուններով, որոնք շատ սրամիա և բընօրոշ էին:

Մայրերը, քոյրերը, կիները նայում էին իրենց բանտարկեալներին, նայում և կարծես իրենց հայեացքի ամէն մի ճառագայթի մէջ ամփոփելով իրենց օրտերն ու հոգիները, ուղարկում էին զրահապատ շարքերից ներս, դէպի իրենց սիրասուն զաւակները, դէպի եղբայրները և նահատակ ամուսինները:

Ի պատիւ բանտարկեալների , սիէտք է առեմ ,
որ իրենց պահում էին ամուր . պողպատի պէս պինդ :
Թուլանում էինք մենք , ոչ մի ազգական շունեցող-
ներս : Արդեօք հիւանդութիւնս էր , թէ հեռաւոր
ընաանիքիս կարօտը , — չը գիտեմ , բայց երկու ան-
գամ աչքերս լցւեցին , թուլացայ , ընկերներիս կըտ-
րիմ զիրքից ստորացայ :

Վերջապէս հնչեց գնդապետի ձայնը .

«Կանդնե՛լ» :

Եւ բոլորս ուրախութեամք ոտքի ելանք : Փայ-
տացել , չորացել էինք ցրտից . վայրկեան առաջ ու-
ղում էինք վագօն մտնել , տաքանալ :

IV

Մի բուզէ թուլացած երկաթէ կարգապահութիւնը
կրկին սասակացաւ :

Մեզ առաջնորդեցին կայարանի լայն դարպասով
ուղղակի դէպի վագօնները , առանց մտնելու որ և է
շէնքի մէջ : Չորս-չորս շարուած՝ անցանք երկա-
թուղու բազմաթիւ գծերը և կանգ առանք միջա-
վայրի լայն սալայտակի վրայ :

Կրկին սկսեցին ձեւականութիւնները : Կարգով
կարգում էին բոլորիս անունները , հերթով լցնում
մեզ վագօնները և դոները պինդ կողպում :

Մւհ , ծանօթ վագօններ :

Հասարակ վագօններ չեն նրանք , այլ երկաթէ
գերեզմաններ : Դոները երկաթապատ և պինդ ,
Պոյտ բանալիով կողպւած : Լուսամուտները հասա-

Երկաթէ ցանցերով ծածկւած : Երկաթներն էլ այնքան իրար մօտիկ . որ ձեռքդ անգամ չես կարող դուրս հանել . . . Օդը խեղդւած , արտաքնոցը վագնի մի անկիւնում , միշտ անմաքուր , միշտ գարշահոտ :

Մի ամիս առաջ , երբ Թիֆլիսից Էտապով բերին 13 հոգու նոյն այդ վագօններով , հիւանդացայ և մի ամսից աւելի էր , գեռ չէի կազդուրուում :

Երբ մեզ լցրին վագօնները , ինչպէս անասուններ , և գոները պինդ գոցեցին , այն ժամանակ միտյն կտյաբանի սրահներից հսկոյամարմին և երեսները մօրուքէ ծովով ծածկւած ժանդարմները պլատֆորմ թողին գուրս գալու բանտարկեալների աղգականներից մի քանիսին :

Վերջինները բերել էին թէյ , շաքար , հաց , պատղներ , չոր կերակուրներ և այլն : Այս սպային , այն ժանդարմին , այս լրտեսին . միւս կօզակին խնդրելով , պաղատելով . ափերը դրամ դներով՝ հազիւ կարողացան մեր վշտաբեկ ազգականները վագն հասցնել բերած պաշարեղէնները :

Աչքով տեսնում էինք , թէ ինչպէս այս ու այն ժանդարմը . պաշտօնեան , զիսւորը և՛ կաշառք էին տռնում ռւտելիքը վագօն բերելու , և՛ բերած թղթէ տռպրակների միջինի մի խոշոր մասը խոթում իրենց պրանները : Չարանում , բարկանում , բայց . . . ծիծագում էինք : Դա անկարողութեան , սեփական թուլութիւնը գիտակցելու ծիծաղն է . որ հաւասար է հազար լացի , որ աւելի մաշող , աւելի կրծող է . քան թիւրաւոր տանջանքը :

Փակւեցինք վագօններում, հետներս էլ բազմաթիւ պահապաններ, զինւած կօղակներ:

Պէտք է ասել, որ Ռուսովի, Նօվօչերկասկի ամբողջ նահանգը կօղակների շրջան է, «Դօնի կօղակների շրջան»։ այստեղ չկայ ոչ մի հասարակ զինւածք։ ամբողջ ազգաբնակութիւնը բաղկացած է կօղակներից, և ամէն մի տղամարդ ի ծնէ կօղակ է։ որոշ տարիքի համեստով, ծառայում է գնդում իր սեփական ձիով, սեփական զգեստներով։ Դրա փոխարէն ազգաբնակութիւնը խիստ հարուստ է հողերով։

Թաւական երկար մնացինք Ռուսովի կայարանում—մինչև կէս գիշեր։ Հաց կերանք, թէլ խմեցինք, տաքացանք և տրամադրութիւններս կրկին բարձրացաւ։

Շարժւեց գնացքը։ Մութ, խաւար և ցուրտ գիշեր։ գնացքը սլանում է տափակ, անծայրօրէն երկար, ընդարձակ, գորշ գաշտերով։ Վերջ ու վախճան չկայ։ տափակ է երկիրը, տափակ է բնութիւնը, ատափակ են գիւղերն ու քաղաքները, գետերն ու բոյսերը, տափակ են մարդիկ։ լայն սրտով, ինչպէս իրենց տափարակները, համբերութեան անհուն բաժակով, առանց բողոքի, առանց սպառնական ապստամբ շեշտի։ Դրանք, այդ տափարակները միայն կարող էին Տօլստօյի վարդապետութիւնն ստուգել իր «Մի՛ կալ հակառակ չարին»ի սկզբունքով . . .

Հառանք Նօվօչերկասկի Կամաց Ազգային գրադարան

ՀՕ. ԲԻBLIOTOKA

ZUUN-AN. ССР

Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

Աղմաւկով ու ժխտով բացւեցին վազօնների դռները : Կայարանի լայն պլատֆորմը, գծերի ընդարձակ բակը լցւած էր զօրքով :

Քուրս բերին և շարեցին գծերի մէջտեղ գտնւող լայն սալայատակի վրայ :

Մի գժբախտ միջագէպ փչացրեց և սլզաբռն բոլորիս տրամադրութիւնը : Բանտում մարդ գտանում է դիւրահաւատ, նախապաշարւոծ : Այդ դէպքը կարծես մեզ համար մի չարագուշակ նշան դարձաւ :

Վագօններից դուրս գալիս Մեղնիկեանը վայր ընկաւ սալայատակի որձաւքարերի վրայ . վայր ընկաւ ամբողջ հաստկով, ինչպէս մի երկար փայտի կտոր : Ճակատը զարնւեց օալին և խոշոր պատառւածքից առատորէն սկսեց վազել ալ-կարմիր արիւնը երեսի, մօրուքի, կրծքի վրայ, կարմրեցնել ամբողջ զգեստը :

Սիրտս սեղմեեց, ոտերս թուլացան և մազ էր մնացել որ գետին ընկնէի : Արցունքները խեղդում էին . . . չէի կարողանում տիրել նեարդերիս : Թանը էր թուլացած կրծքիս ու բազուկներիս համար իմ տոպրակը : Լաւ էր, որ Ս. Ղազազեանը նկատեց և տոպրակս վերցրեց, թէև իր բեռն էլ բաւական շատ էր :

Թաշկինակով կապեցին Մեղնիկեանի ճակատը : Իսկ ինքը, վիրաւորը միանգամայն անտարբեր, սառը կանգնած էր . կարծես մարդկային էակ չէր, այլ մի անշունչ իր, որ ոչ ցաւ էր զգում, ոչ էլ գիտակցում իր վիճակը :

իսկոյն շրջապատեցին մեզ կօգակները :

Մութ, խաւար գիշեր անծանօթ քաղաք, անծանօթ փողոցներ, անծանօթ մարդիկ . . .

Մութն այնքան խիստ էր, որ սկզբում չէինք կարողանաւմ ըմբռնել, թէ որքա՛ն են կօգակները, փողոցում ենք, թէ բակում, քաղաքի մէջ, թէ քաղաքից հեռու :

Կամաց-կամաց աչքերս վարժւեցին մթին :

Այժմ պարզ էր. կօգակները Ռոստովում եղած-ներից կարծես աւելի էին :

Աւրեմ՝ նոյն դաժան, նոյն սատանայական կար-դադրութիւնն այստեղ էլ էր արւած :

Առաջնորդեցին մեզ կայարանի միւս կօղմը, մի բաց հրապարակ : Կանգնեցրին չորս-չորս :

Կողքիս գտնւող ակնոցաւոր և ծաղկատար դէմ-քով մի սպայի իսկոյն ցոյց տւի բանտի րժշկի տւած վկայագիրը :

Ախսու էր այդ վկայագիրը : Բարի բժիշկը, գիտնալով մեր մասին եղած դաժան կարգադրութիւնը, այնպիսի մի վկայագիր էր տւել, որ սաիպ-ւած լինեն ինձ ոտով չտանել : — «Թոքախտաւոր է» — ահա վկայականս : Եթէ գրէր՝ թէ քրօնիքական բրօնչիտով է հիւանդ, ոչ ոք ուշք չէր դարձնի, ինչպէս ուշք չդարձրին բժիշկ Աթարէկեանի «օր-դանական սրտախտին», միւսների այլ և այլ հիւան-դութիւններին :

Պատմ իսկոյն հրաւիրեց ինձ նստել պատրաստի սպայի վրայ : Կողքիս կանգնած էր իրաւաբան շահ-

ւոն Մուշեղեանը : Նա էլ իսնդրեց . բարի սպան
նրան էլ թողեց , բայց խկոյն շտապեց հեռանեազ մետ
մօտից , որպէս զի այլ եւս ուրիշները չիսնդրեն :

Մօտեցաւ մի գնդապետ : Կանգնեցրի նրան :

—Պ . գնդապետ , այստեղ մի վիրաւոր հոգեկան
հիւանդ կայ , չէ կարող քայլել . ազաշում եմ , սայէ
նօտեցրէք :

—Դա ձեր գործը չէ , —պոռաց կտրիճ սպան .
—բոլորն էլ պէտք է ոտքով գնան :

Սարսափը պատեց ամէնքիս : Ուրեմն , մտածեց
մեզանից ամէն մէկը , այստեղ աւելի խիստ , աւմի
անսիրա են :

Խխան Յ . Արդութեան , բժիշկներ Օհանջանեան
և Աթարեկեան , յետոյ Ահարոնեան , Մանասեան : և
այլն , իսնդրեցին , որ գոնէ թոյլ տան իրենց սոտագ-
րակները գնելու սայլի վրայ :

Գնդապետը բարկացաւ և սպառնադին ձայնով
որոտաց . «կալանաւորը պարտաւոր է իր բնուն
ինքը շալակել» . . .

Ես և Մուշեղեանը փորձեցինք միջնորդեց մէ
ուրիշ սպայի . որ գոնէ Ահարոնեանի , Արդութեանի ,
Օհանջանեանի , Սահակեանի տոպրակները թոյլ տան
գնելու սայլի վրայ , որովհետեւ այդ մարդիկը սատի-
քով մարդիկ էին , բեռ կրելու ամենեւին չվարժւած :
Սակայն սպան լսել անդամ չուզեց և հեռացաւ մօ-
տերից :

«Հրացանները լցնե՛լ» , որոտաց գնդապետի ձայնը :

Եւ շրիմկ-շրիմկացին երկաթները . զէնքերը լցւեցին գիշերային մթութեան մէջ :

«Հրացանն ուսի՞ն», կրկին խանգարեց գիշերային լոռութիւնը գնդապեաի խրօխտ ձայնը :

Կօղակները երկարք շրջապատեցին մեր ընկերներին, իսկ մեզ, սայլի վրայ նստած երկուսիւ, շրջապատեցին 10 կօղակ :

Թափօրը կազմւեց, պատրաստ շարժւելու :

Զրահաւոր օղակի առջեւից գնում էին մի խոչում խումբ կօղակներ, ետեւի կողմից նոյնպէս :

—Կալանաւորներ,—գոռաց գնդապեալ, —վախչելու մի ամենափոքր փորձ, մի ամենաշնչին շարժում և ես կը հրամայեմ կոտորել բոլորիդ լորերի պէս :

Սպառնալիքն ամենեւին չաղեց մեզ վրայ, սրովնետեւ բոլորս էլ դիտէինք, որ փախչելու միտքըն անգամ չքացած էր մեր դլիսից :

Փախչել, բայց ի՞նչպէս և ո՞ւր—այս անծանօթքաղաքում, կօղակների ազգարնակութեան մէջ : Իսկ կօղակը դեռ ևս մեզ համար նշանակում էր նրեւ, գազան : Յետոյ փոխւեց մեր համոզումն այդ մասին, բայց մինչ այդ՝ դեռ մենք կօղակ ասելով : Իսկոյն մտաբերում էինք կովկասում եղած ձիւոր կօղակները և պյասուն կոչւած հետեւակ կօղակները, որոնք մարմնացումն էին գամանութեան, անսրտութեան և անամնութեան :

30—40 ջահակիրները բռնեցին իրենց տեղերը, և թափօրն ստացաւ իր մեռելաթաղ բնոյթը:

Լուռ էր գիշերը: Աստղերը նայում էին վար, մեր ասուապալից երկրին ապուշ անտարբերութիւնով:

Այդ վայրկեանին ես ատում էի բոլոր բանաստեղծներին, որոնք երգել ու գովել են չքնազ աստղերը: Ռուսական տափարակների երկինքն էլ այդ բոպէին գարշելի էր թւում ինձ: Նրա աստղերը փայլ չունէին. նրանք չէին շոգում այնպէս, ինչպէս հարաւի վառ աստղերը. նրանք գութ, խիղճ չունէին, ինչպէս մանկութեան երազ—օրերիս իժ սիրած աստղը—Սիրիուսը, որ յաճախ նստում էր Մասիսի գլխին, համբոյրներ տալիս նրա ծեր գագաթին:

Սայլում նստած և գողղողում էի—թէ ցրտից և թէ ջղայնութիւնից, և տարւել էի այդ մտքերով, երբ կրկին որոտաց գնդապետի ձայնը: Ինձ թւում էր, որ ես տեսնում էի այդ ձայնը և ոչ լսում. նա նմանում էր մի բեկրեկող կայծակի, որ գալիս խարազանում է մթնոլորտի վերին, շերտերը:

«Դանդաղ քայլել», — ըրամայեց այդ երեւացող ձայնը:

Ու շաժւեց թափօրը: Երեւակայութիւնս գրգըռաւած էր: Յոգնած, ուժասպառ, անքուն: Այդ ամբողջ օրեւայ տպաւորութիւնները լափել էին սիրտս ու հոգիս:

Սայլի վրայ լուռ նստած, դիտում էի:

Գնում էին բանտակից, տառապակից ընկերներու

մէջքերը կքած իրենց բեռների տակ, լուռ, անձայն :

Մա'րդ, մա'րդ, ո'րքան ընդունակ ես զու տառապելու, ո'րքան ընդունակ ես համբերելու և դիմանալու,

Մեր այս թափօրում այլեւս ոչ ոք չկար, բացի մեր 78 հոգուց . բոլորս էլ «Դաշնակցութեան Գործակալ» մեղադրւողներ : Բոկոսաները, մեր ցնցոտիաւոր էտասպակիցները մնացել էին վագօններում, և նրանց դնացքը վազուց արդէն սլանում էր առաջ, պատռելով անհուն տափարակները :

Ես երանի տւի նրանց, որ գնում են իրենց ծննդավայրերը և բոլորն էլ շուտով պիտի ազատւեն : Սոված պիտի մնան, ի՞նչ փոյթ . այլեւս Լիժինի երեսը չեն տեսնելու, այլեւս բանափի խուցերի դռան համատ սողնակը չէ ճանկուածելու նրանց հօգին . Իվանն ու Պետրը այլեւս չեն տրորելու իրենց աղաւատ ուժներով նրանց ինքնասիրութիւնը, նրանց եսը :

Խօսաւովում գոնէ գետինը սառած էր, իսկ այս անեղ ճանապարհը ցեխ էր, անտանելի թանձը ցեխ, կաւ, մեծ մասն առանց սալայատակի, առանց խը-ձուղու :

Չափածոյ քայլերով, հարթ, հաւասար ու դանդաղ ընթանում էին կօդակները գորշ վերարկուների քղանցքները դարձրած և գօտիների մէջ խոթած, իսկ երկայնավիզ կօշիկները մինչեւ ծնկները քաշած : Կօզակների միջով երեւում էին մեր ընկերները, բեռները շալակած, լուռ, մաազրագ . . .

Երբեմն երբեմն փողոցների լապտերների դոյջախ պակ նկատում, ջոկում էին նրանց: Ահա իշխանն Յովսէփի Արզութեանն իր զոյգ խոշոր տոպբակներով. նա տղամարդու պէտ տամսում է իր բեռը, նաև չէ մնում: Ահա մեր բանաստեղծը, մեր ողբերգու Ա. Ահարոնեանը՝ գունատ, մտածկոտ, երազուն դէմքով. ինչե՛ր էին անցնում նրա մտքով, ի՞նչ օձու կարիճներ էին վիստում այդ վայրկեանին նրան վիրաւոր սրատում: Ահա և միւսները... Բայց լապտերի լոյժն արդէն հեռանում էր, և խաւարի մէջ կրկին կորչում էին սիրելի դէմքերը:

Երիտասարդ ընկերներն արդէն վերցրել են Աւետիս Ահարոնեանի և մի քանի ուրիշ հասակաւոր ընկերների բեռը. նրանք զահել են, նրանք կը տրիմ են:

Թէև հաստատ գիտէի, որ այդ այդպէս էլ սպիտէ լինէր. համոզւած էի, որ մի Կամսար, մի Դեւանդ պատրաստ էին ամէն նեղութիւն կրել մի քանի հասակաւոր ընկերների համար, —այո՛, դիտէի, բայց կրկին ազդւեցի, կրկին սիրտս լցւեց:

Խճուղու վրայով բաւական երկար քայլուց յետոյ՝ ծուեցինք դէպի աջ: Ցեխը սաստկացաւ: Երկու կողմերից հողամումքեր էին, իսկ ձանապարհը փոսի միջով: Թումբերի գլխին երկու կողմից էլ աներ էին, ոռւսական փայտէ փոքրիկ, անշուք իսրճիթներ: Այդտեղից արդէն ճանապարհը բաւական արագ իջնում էր և քաղաքից դուրս գալիս: Փողոցներից մէկի մէջ, մի քառուղու անկիւնում

բաւական խոշորկեկ մի եկեղեցի երեւաց իր քիւ-
զանդական բաղանիսաձեւ գլխով, լայն նստւած քով
և ծութե խաչով :

Ուրիշ պարագաներում ոչ մի զգացում չէր կա-
րող զարթեցնել իմ մէջ Այս-Սօֆիայի այդ այլան-
դակւած պատճէնը . իսկ այժմ նա մի զարհուրանք,
մի սոսկալի հեգնանք ծնեցրեց իմ սրտում :

«Երեի Լիմինն ու դատախազներն էլ այստեղ են
աղօթում, Նազովրեցուն նւիրւած այս տաճարում,
ակամայ մտածեցի ես : Եւ ապուշ էի կտրած, թէ
ի՞նչպէս է որ Լիմինի այնտեղ եղած պահուն չի
փլչում այդ տաճարը : Ու վճռեցի, որ Ենովան, իր
վրէժիննգիր կայծակներով, աւելի լաւ է, քան
«Գառն Աստուծոյ» Նազովրեցին . . .

Ճանապարհն արագ վայր էր իջնում, և մեր պի-
ւային թափօրը քայլերն ակամայ արագացնում էր :

Անցանք մի հսկայական զօրանոցի առջեւով :

Արդէն ամբողջ Ռուսաստանը մի ամենի, մի տի-
եզերական զօրանոց է :

Պահապան կօգակները զարմանքից ապուշ կտրած,
նայում էին մեր սոսկալի թափօրին :

Հազիւ 100-200 քայլ առաջ էինք անցել, երբ
մի երկարանասակ, նիհար ու անմազ երեսով սպազ
դուրս եկաւ զօրանոցից և արագ մօտեցաւ մեզ :
Նա չյանդպնեց մօտենալ ոտով գնացող կտրանաւոր-
ներին, որպէս զի չզրաւէ գնդապետի և, մանա-
ւանք, նրա հետ գնացող մի երկայն ընչացքներով
պաշտօնեայի ուշագրութիւնը : Սպան ուղղակի մօ-

առնցաւ մեր սայլին և, իբր թէ զինւորների հետ խօ-
անդավկ, հարցրեց մեզ:

—Այս ի՞նչ էտապ է:

Զգալով սպայի փափուկ զրութիւնը, Լ. Մու-
շեղեանը, իբր թէ ինձ հետ խօսելով, կամացուկ
պատուամաննց.

—Դաշնակցականների գործով մեղադրւողներն են,
որ Ռուսովից տեղափոխւում են այս տեղի բանար:

Մի երկու հարցում էլ ուզդեց մեզ սպան, ստա-
ցաւ բաւարար պատասխան և հեռացաւ արագ, ան-
նշմարելի մնալու ակներեւ նշաններով:

Սպայի հեռանալուց յետոյ, կօղակները, որոնց
հետ արդէն կամացուկ և զգուշաւոր ձեւով սկսել
էինք խօսակցութիւն, —մեզ յայտնեցին, որ այդ
սպան շատ լաւ և բարի մարդ է, որ առնասարակ
իրենց սպանները շատ լաւ մարդիկ են, բացի գնդա-
պելուից:

Առիթից օգտելով, ես հարցրի թէ ո՞վ է այն
երկար ընչացքներով ու մեծ փափախով պաշտօն-
եամն:

Պէտք էր տեսնել մեր պահապաններից երկուակ
դէմքների ծամածութիւնը և արտայայտած արհա-
մարհանքն ու ատելութիւնը, երբ բացատրեցին, թէ
այդ մարդը քաղաքի ռստիկանապետն է: Էլ ի՞նչ
ոլուանք արտայայտող ածական ասես, կպցրին նրա
անուաննը:

Ճանապարհի ցեխը սաստկացել էր: Կալանաւոր-
ների յոդնած ճակատներից քրտինքը ծոր-ծոր իջ-

նում էր խոնջացած դէմքերի վրայով և կաթում ցեխերի մէջ :

Մայր-երկիրն ագահ է . նա միշտ ծծում է խեղճիք քրափնքը ու լիացնում հարստին , կեղեքոզին :

Անձանօթ ճանապարհը մարդու միշտ երկար է թւում : Մեզ էլ երկար , շատ երկար թւայ այդ ուզին : Անհամբեր ուզում էինք տեղ հասնիլ , կարծես մեծ վայելքներ էին սպասում մեզ այնտեղ :

Ճանապարհի թեքութիւնը դադարեց , և մենք գնում էինք հարթ դաշտով : Աջ կողմում այլ եւս շինութիւններ չկային , այլ ոռուսական անձայր տափարակն էր : Իսկ դէպի ձախ բարձրանում էր մի զառփեր . որի գլխին երեւում էին տներ , լապտերներ . այնտեղ էր Նօվօչերկասկը , կօզակների շրջանի կենդրոնը , անդորր նիրհած :

Դեռ նոր էինք իջել հարթ ճամբան , երբ նկատեցի , որ մեր թափօրի ծայրն արդէն կանգ է տռել : Մի վայրկեան եւս առաջ շարժւեցինք և մենք էլ կանգ առանք , սայլից իջանք , վերցրինք տոպրակներս և կարգ կանգնեցինք միւսների հետ :

Լոյսը բաւական շատ էր . երկար սիւների ծայրին ամբացրած էին Վաշինգտոն լապտերներ , որպէս զի բանտի հօկոդութիւնը դիւրանայ :

Մենք կանգնած էինք մի աղեղաձև պարսպի առջև : Ուզիգ մէջտեղը , բարձր պատի մէջ երկաթէ ահապին գարսպատն էր . իր փոքրիկ դռնով , իսկ դրան մէջ էլ մի շատ փոքրիկ լուսամուտաձև ծակ , որ ծածկւած էր երկաթէ փեղկով :

Դէպի աջ և դէպի ձախ բանտի պարփակները բոլորակածեւ առաջ էին գալիս և ապա բեկւում և ուղիղ գծով գնում, ուր, ի՞նչ ուզզութիւնով, երկա՞մք թէ կարճ, — այդ անկարելի էր նկատել. գեռ գիշերւայ ժամը 2 կամ $2\frac{1}{2}$ ը կը լինէր, մութը գեռ թանձր էր :

Սակայն այդ մթութիւնը մեր բորբոքուած երեւակայութեան մէջ աւելի էր մեծացնում մեր բանտը ու աւելի խորհրդաւոր դարձնում:

Ձախ թեւի վրայ բանտի եկեղեցու դռւան էր, ծուաթեւ խաչը գլխին, տանիքի ծայրին, իսկ աջ կողմը՝ գոնապանի տաքուկ խուցը.

Դուրս եկաւ զոնապանը: Կարմիր, մսոտ երեսով և ֆալստաֆեան, տակառածեւ մարմենով մի քարի ծերունի էր, որ կատակելու պատրաստ նայուածքով դիտում էր մեզ, սեւ մազերով, ուր աչքերով, սեւ մօրուսով այսքան բանտարկեալներիս:

Կօզակները բոնեցին այդ կիսակլոր տարածութեան բաց մասը, իսկ մենք զետեղւեցինք պարփակների և կօզակների միջեւ: Կապոցներս վայր դրած, անհամբեր սպասում էինք:

Մօտ կանդնած ենթասպայից խնդրեցի թոյլառութիւն նստելու: Յոզնած էի, կուրծքս բոնքած, ամէն մի շունչ քաշելո ինձ համար կատարեալ տանջանք էր: Նստեցի բարձր տոպրակիս վրայ և երազում էի: Ու ինձ թւաց, թէ երկաթէ դարպասի դռան ճակտին տեսնում է Դանտէի բառեցը.

Laseiate ogni speranza.

Թողէք բոլոր յօյսերը :

Դանաւէն ասում է, որ այդ բառերն էին գրւած
Եթոխքի դրան վերևուը, իսկ դրան վրայ փորագրր-
ւած էին.

«Այստեղով են գնում դէպի տիրութեան քա-
ղաքը :

Այստեղով են գնում դէպի յաւիտենական տա-
ռապանքը :

Այստեղով են գնում դէպի կորած մարդիկը :»

Ես կարդում էի այդ բառերը երկաթէ դարպասի
վրայ, կարդում անդադար, կարծես ուզելով վար-
ժեցնել ինքո ինձ այնտեղ, այդ դարպասի ու պա-
րիսպների եւու թագնւած բոլոր տառապանքներին,
բոլոր զարհուրանքներին:

Գնդապեաը և ոստիկանապեաը մի քանի սպա-
նեսի հետ ներս էին մտել: Այժմ նրանք դուքս ե-
կան բազմաթիւ բանտային վերակացուների և մի
սպաշտնեայի հետ:

Սոսկալի էր այդ սպաշտնեայի թողած առաջին
խեկ տպաւորութիւնը: Նա գեղեցիկ էր, կարմիր
թշերով և սպիտակ, փափուկ մարմով Սիրիացի կամ
Շամախեցի կնոջ պէս. նրա շրթունքները կարմիր
էին, ինչպէս Բերայի փողոցներում թափառող և ի-
րենց վաճառքի հանող կանանց ներկած շրթունքնե-
րը: Նրա գիրուկ մարմինը, նրա իւզու աշքերը
տափանք էին արտայայտում, լպիրչ պակշոտու-
թիւն:

Սկզբում բոլորս կարծեցինք, թէ դա է բանտառպեար, բայց յետոյ իմացանք, որ աւագ օգնականն է, Սալտիկ անունով :

Անուններս մէկ-մէկ կարդալով, մեզ ներս էին ընդունում, երկաթէ դարպասի այն կողմը, տառապանքի ու հառաջանաց տունը :

Ներս մտանք մի մեծ ու բնդարձակ բակ : Դիտում էինք չորս կողմերս : Բակն աստիճանաբար բարձրանում էր դէպի վեր, քաղաքի ուղղութիւնով : Այս ու այն տեղ վառւում էին բազմաթիւ մանր լապտերներ, իսկ հեռուն՝ երկու կէտում երեւում էին վաշինգտոննեան մեծ լապտերներ : Մեզանից բաւական մօտ երեւում էր մի մեծ տուն, զօրանոցի պէս, միայն ցած ու միյարկանի : Նրանից այն կողմ, աւելի հեռուն երեւում էին գերեզմանաձեւ ուրիշ շինքեր էլ, բայց մժութիւնը, որ սև հաւի պէս փռել էր իր թեւերը երկրի վրայ, թող չէր տալիս որ և է գաղափար կազմել բակի և բանդի ընդարձակութեան մասին : Վառւող ճրադներն ու խոշոր լապտերները չէին կարողանում յաղթել մեծամարմին խաւարին . ու նրանց փոքրիկ լոյսերն աւելի ևս թանձրանում էին այն կողմում տիրող խաւարը ու մեր երեւակայութեան մէջ աւելի ևս հսկոյ կերպարանք տալիս մեր բանտին :

Կօզակների մեծ մասը արձակեցին : Ուրախ ու բախ «միաք բարով» ասելով, հեռացան այդ անհոգ երթասարդները, թողնելով իրենց ընկերակից միայն 3-4 տասնեակ մեզ պահապանութիւն անելու :

Կօզակների դնալուց յետոյ դարպասի վորքը դռւաբնը մեծ աղմուկով փակեցին, և մենք արդէն կտրւած էինք արտաքին աշխարհից :

V

Սկսւեց մի նոր, մի անորակելի գործողութիւն : Թօստովի բանտում գրեթէ ամէն օր, երբ ո եւ է աղմուկ կամ արտակարդ շարժում էր լսում, Ա. Ահարոնեանը կատակով ասում էր .

— Դայիս են մեզ թակելու :

Եւ ամէն անգամ մի այնպիսի արտայայտութիւն, մի այնպիսի նոր շեշտ էր դնում այդ երեք սովորական բառերի մէջ, որ բոլորին էլ ծիծաղ էր պատճառում : Ամէնքն էլ կատակով ասում էին նրան, որ «մի օր քեզ պիտի թակեն, որովհետեւ անդադար թակելու մասին ես խօսում» :

Բաղդի դառն կատակ :

Ամէնից առաջ կարդացին Ա. Ահարոնեանի առնօւնը, յետոյ նրա հետ էլի մի քանի անուններ : Այդ առաջին խումբը ներս մտաւ : Մնացածներս դուրս էինք, շրջապատւած Յ-4 տասնեակ կօզակներով, որոնց հետ արդէն սկսել էինք բարեկամանալ : Ամէն մէկս մի զինւորի մօա կանգնած, աշխատում էինք բացատրել, թէ մեզ ինչո՞ւ են ձերբակալել, ինչո՞ւ են այսքան տանջում, որ այդ տանջողները լաւ մարդ չեն, անարդար են, ևն.., ևն :

Ցուրտ էր, մինչեւ ոսկրները թափանցող ռուսական աշնանային ցուրտ : Հաստ վերարկու, կրկնակօշիկ հագած, կրկին դողում, սրթսրթում էինք : Մեզ տաքացնելու համար մերթ արագ-արագ անց

ու դարձ էինք անում, մերթ ոտքերնիս ուժգնօրէն
գետին զարկում:

Կանչւածներին տարան ներս: Շատ հետաքրքիր
էր, թէ ինչ էին անում: Շտապով առաջ դնացի և
սկսեցի յետ ու առաջ անցնել ուղիղ դրան դիմացը:

Մի սպայ դուռը լայն բաց արեց և իր սպայա-
կան վեհութիւնով ծանր-ծանր դուրս եկաւ, հպարտ
աքաղաղի պէս: Ներս նայեցի:

Մի մեծ սենեակ էր այդ, երկաթէ հաստ գան-
դակներից այն կողմ ազատութեան աշխարհն
էր. մի դուռ կար, որ բացւում էր ուղղակի փողոց:
Վանդակներից այս կողմ բռնութեան տունն էր,
բանտր: Վանդակները երկուս էին. նրանց մէջ տե-
ղը 3-5 ոտնաչափ տարածութիւն կար: Բանտ շատ
էի տեսնլ. հասկացայ, որ դա տեսակցութեան սե-
նեակն էր: Դրսի գռնից կարգով գալիս են ծնողներն
ու ազգականները, իսկ այս կողմից՝ բանտարկեալ-
ները. կանգնում են օրանք վանդ սկի այս կողմը,
նրանք էլ միւս կողմը, և խօսում. իսկ երկու վան-
դակների միջև ման է գալիս պահապան վերակա-
ցուն, որպէս զի օտար լեզւով չխօսեն, իրար ոչինչ
չտան ու չառնեն: Մի խօսքով—հսկում ե:

Դուռը երկրորդ անգամ բացւեց, և ես նկատե-
ցի, որ մեր ընկերներին լցրել էին այդ երկաթէ
վանդակների մէջտեղը, ուր տեսակցութեան օրերին
ման է գալիս վերակացուն:

Երբ նրանց մտցնում են այնտեղ, հոգեկան հի-
ւանդ Մեդնիկեանը ցածը, վախեցած ձայնով հարց-

նում է իր կողքի ընկերից արիւնոտ գէմքն ուղղելով նրան .

— Մեզ սպանում են , հա՞ :

Երեւակայում եմ , թէ ի՞նչ սոսկալի տպաւօրութիւն պիտի գործէր այդ հոգեկան հիւանդ մարդու յաւահատական հարցումը , նրա թուխ ու զժգոյն երեսը , որի վրայ չորացել . լեարդացել էր իր սեփական արիւնը : Մինչեւ անգամ ցուրտ , քաղց և ֆիզիքական ցաւ այլես չզգացող Մեղնիկեանին ցնցել էր այդ գուժկան , այդ մահասարսուու տեսարանը :

Դուօր երրորդ անգամ բացւեց . և այս անգամ Ահարոնեանին և մէկ ուրիշին տեսայ մի մեծ սեղանի առջեւ կանգնած : Սեղանի միւս կողմը նստած էր լսիրշ կերպարանքով օգնականը և երկար ընչացքներով ոստիկանապեար :

Մեծ սենեակի կողքին գէպի ձախ . բացւում էր մի փոքրիկ սենեակ , որի մեծ և վանդակապատ լուսամուտը նայում էր մեր կողմը , միայն թէ մեր կանգնած տեղից հեռու էր . չրջապատող կօզակներից մի քայլ այն կողմ : Հազարով . կատակելով կօզակի հետ , մի քայլ այն կողմն անցայ և լուսամուտից ներս նայեցի : Կեզտոտ ապակիները , ներսի ազօտ լոյսը , շտապով յետ գալս — այդ ամենը միացած՝ թոյլ չտւին , որ լաւ նկատէի թէ ի՞նչ էր կատարւում ներսում :

— Տղայք , ինձ այնպէս երեւաց , թէ Իսահակ Մէլիքեանի զգեստները փոխում էին , — ասացի միւսներին բարձրածայն :

Այդ ժամանակ մերոնցից մէկն էլ կարողացաւ. ներս
նայել և ասաց. որ Մելիքեանի հազուսոը հանւած
է. բայց զգեստներն են փոխում. թէ քջկական
քննութիւն կատարում — այդ յայտնի չէ:

Մինչ մենք այդ խօսակցութիւնների մէջ էինք,
դուքս եկաւ ռստիկանապետը, գնաց գրասենեակ և
յետ դարձաւ: Անդգամը նկատել էր, որ մենք խօ-
սում ենք կօզակների հետ: Նա հազորդել էր այդ
բանը գնդապետին: Յանկարծ դուռը բացւեց ուժու-
նորէն, և որոտաց գնդապետի ձայնը.

— Այս ինչ խայտառակութիւն է. կանգնել խօ-
սում էք բանտարկեալների հետ. լուսթիւն, եթէ
ոչ կաշիներդ հանել կրտամ:

Քար լուսթիւն տիրեց: Կօզակները, որ արդէն
սկսել էին բանալ իրենց սրտերը, պապանձւեցին մի
առժամանակ: Գնդապետը կորաւ-դնաց, և բանտի
դարպասը գզրդողով փակւեց նրա ետեւից: Եւ կօ-
զակների ու մեր լիզուն կրկին բացւեց:

VI

Մի անգամ էլ դուռը բացւեց: Երանի յաւթանան
շրացւէր:

Կատարեն, էր այն, ինչի որ ամեննեւին չէինք
ուզում հաւատալ:

Ամէնից առաջ դուրս եկաւ Ա. Անարոնմանը,
բարկացած, կատաղած: Մոխրագոյն բոււլաքը (ժա-
կէտ) և մոխրագոյն պանտալօնը հազին, մոխրագոյն
թասակը զլիսին և մի մոխրագոյն վերմակ էլ թեւին
զցած: Այդ բոլորը գորշ, հաստ, կոպիտ մահուզից,
յատկապէս կալանաւորների համար նոյն բանտում

պատրաստւած։ Բոլորի հագին թողել էին միայն իրենց սպիտ սկեղէնը, գուլպաները և կօշիկները։

Աւետիսն առաջ էր ընկել, իսկ ետեւից գնում՝ էին լուսանկարիչ Խոսհակ Մելիքնանը, անտարբեր Մեղնիկեանը և ուրիշները։ Մի վերակացու ուղեկցում էր Նրանց դէպի խաւարի կողմը, թումբն ի վեր, մեզ համար անյայտ մի տեղ, հեռում երեւացող գոմանման շէնքերից մէկը։

Հէնց որ Աւետիսը երեւաց իր թուխ դէմքով, իր նոր, արաւառոց զգեստով, իր վերմակը ջէնտմէնի վերաբերի պէս թեւին զցած, մի ակամայ ծիծաղ պրծառ։ ծիծաղում էինք բոլորս, գրեթէ առանց բացառութեան։ Դա ջղային, յուսահատական ծիծաղ էր, որ հազար արցունք արժէր . . .

Եւ ո՞ր սատանան գրդեց այդ անզգամներին անպատճառ ամէնից առաջ Աւետիսի զգեստները փոխել։

Այդ չար աստղը Ռօստօվի և Նօվօչերկասկի բանառում երբեք չէր հեռանում նրանից։ Մտնում էին մեր սենեակը խուզարկութեան, ամէնից առաջ և ամէնից խիստ նրա օձիքից էին բռնում, նրա զգեստաներն էին քրքրում։ Զգիտեմ ինչո՞ւ, մի օր նոյն իսկ նրա կօշիկը հանել տւին և մէջը նայեցին. մի բան, որ մեր կամերում (սենեակում) երբեք չէր պատահել։ Միւսներին տարան և մօտիկ ընկերների, գոնէ առողջ մարդոց հետ փակեցին մի խցի մէջ, իսկ նրան ընկեր տւին հոգեկան հիւանդ Մեղնիկեանին։

Աւ այս անգամ էլ, զնացին-եկան, ամէնից առաջ նրան հազգրին կալանաւորի գորշ զգեստը :

Սւետիսի հետ ելնող խումբը հազիւ գեռ մթութեան գիրկն էր մտել՝ կանչեցին մի ուրիշ խումբ։ Մրանց հետ ներս տարան և Արմենակ Սելեանին։

Երկրորդ խումբը գուրս եկաւ։ Նրանց էլ զգեստները փոխել, մոխրագոյն, կալանաւորի հազուատէին տւել։ Նրանց էլ մի վերակացու առաջնորդեց մի ուրիշ կողմ, աւելի դէպի աջ։ Եւ թանձր խաւարը նրանց էլ կլանեց։

Սակայն Արմենակը չերևնաց, նա գուրս չեկաւ, մնաց սենեակում։ Նրան նոր զգեստ հազցնելու կարիք չկար, նա արդէն այդ զգեստով էր եկել և արդէն չորս տարի էր նրա մէջն էր, հաստ շզթան էլ ոտքերին, իրը օժիտ։

Կանչեցին մի երրորդ, մի չորրորդ խումբ։ Բոլորին էլ զանազան ուղղութիւններով դէպի վեր, ցած ու երկարաձիգ շնչքերն էին տանում։

Այդ գործողութիւնը տեւեց երկու ժամից աւելի։

Այլեւս կալանաւորի հագուստ հագնելը մեզ չէր սոսկացնում։ Մենք արդէն վարժւել էինք և զանազան գատողութիւններով աշխատում էինք մեզ համոզել, որ «դա էլ մի մեծ դժբաղզութիւն չէ»։ Աւ այնուհետև, երբ աչքեցս արդէն վարժւեցին գորշ զգեստին, սկսեցինք անվերջ կատակներ։ Գտնում էինք, որ, օրինակ, այդ զգեստներն այսինչին շատ «սաղական» են, կամ մի ուրիշը նրանց մէջ նման է

մի «մաշաղիի», մի թախի կամ մի «բօստանչուց» ևայլն, ևայլն :

Մեր պահապան կօզակները բոլորն էլ շատ լաւ երիտասարդներ էին — զգայուն, բաւական տեղեակ երկրի անցուղարձիս և, մանաւանդ, բարի : Նրանք պատմեցին իրենց Խապեօրեան գնդի ընկերների անհնաղանդութեան և ապստամբութեան պատմութիւնը : Յայտնեցին, որ այդ առիթով մի քանի հարիւր մարդ դատի տակ է ևայլն, ևայլն :

Բանտի պարսպի մէջ մտնելու առաջին վայրեկնաններից իսկ մեր ուշաղը ութիւնը գրաւեց սուլոցների սուր, ծակող ձայնը գիշերային խաղաղութեան մէջ : Իւրաքանչիւր կէս ժամը մէկ՝ հեռութից լուսում էր մի բարձր, թափանցող սուլոց : Դա աւագ հսկիչի սուլոցն էր :

Այնուհետև նրան անմիջապէս պատամխանում էր մի երկրորդ սուլիչ . յետոյ հնչում էր երրորդը, չորրորդը և այդպէս շարունակ — մինչև 13րդը :

Սկզբում սարսափի ազդեցին մեզ այդ սուլոցները : Ուրուր տեսած թուխսի ճուտերի պէս շփոթւեցինք և, կարծես, ապաստան էինք որոնում :

Մեր եղած բանտերում այդպիսի բան չէինք տեսնել : Քսդհակառակը, գիշերային ամէն մի սուլոց մեզ յիշեցնում էր ոստիկանների իրարանցում, մի ոճիր, մի սպանութիւն, մի կողոպուտ և կամ մի խուզարկութիւն, փախուստ և ձերբակալում :

«Արդեօք մի նոր դա՞ւ է պատրաստում» , — մտածեցինք բոլորս էլ և շւարած իրես նայեցինք .

երբ առաջին անգամ հնչեցին դիշերային գումկան
սուլոցները :

Հարցրինք կօզակներին, և նրանք բացատրեցին
որ բանտի գիշերապահներն են սուլում։ Աւագ հըս-
կիցը տւած սուլոցին պէտք է պատասխանեն թոլորը .
որպէսզի երեւայ թէ քնած չեն։

Վերջապէս հասաւ և իմ զգեստաւորուելու րոպէն :

Նախավերջին խմբի մէջ ընկայ և ես։ Յիշում
եմ, որ բժիշկ Լեւոն Աթարեկեանն էլ մեր խրմ-
րումն էր։

Մատանք ներս, խրաքանչիւրս իր առպրակո
հետը։ Վերակացուները կոպտաբար հրեցին մեզ
դէպի երկաթէ վանդակը։ Լցւեցինք նրա մէջ,

Յիշեցի Բերլինի կենդանաբանական պարտէզը,
նրա երկաթէ վանդակները։ Նրանց մէջ փակւած
առիւծները, արջերն ու գայլերը . . .

Մէկ-մէկ կարդում էին մեր անունները, և մենք
դուրս էինք գալիս վանդակից, մօտենում երկար
սեղանին, պարկերս վայր դնում և պատասխանում
ագնականի ու սստիկանապետի բոլոր հարցերին։

Հարցնում էին անուն, հայրանուն, ազգանուն,
տարիք, արհեստ, որտեղից կամ որ բանտից գալը,
ինչ գործում մեղադրւիլը։

Հարցումները վերջանալուց յետոյ իշկոյն հեռա-
նում էինք մի երկու քայլ։ Վերակացուները մօտե-
նում, մանրակրկիտ խուզարկութեան էին ենթար-
կում թէ մեր վրայի զգեստները, թէ պարկերում
ունեցածներս։ Յետոյ տալիս էին մեր պարկերը մեղ

և հրամայում մտնել կողքի սենեակը — հանգերձաքանը : Այնտեղ տհա սկսում էր «զգեստաւորման» ծէպը :

Մի որ և է մեծ կտոր, ներքնակի մի ծածկօց հանում էին ամէն մէկիս պարկից, փռում գետնին, որարկի մէջ եղածն այնտեղ դատարկում, վրաներիս զգեստները և գլխարկներս հանել տալիս, գրադանները նորից պրապտում և նետում նոյն կոյտի վրայ . ցետոյ սփոռոցի երկու հակադիր ծայրերը մէկ կապում, միւս հակադիրներն էլ խաչաձեւ վրայից կապում : Այնտեղ, մի անկիւնում նստած էր Թագարակը, գողութեան համար մի տարի թէ տարի ու կէս բանտարկութեան դատապարտւած մի կօզակ կազանաւոր, և գրում էր ամէն մէկիս անուն-ազգանունը փոքրիկ, քառանկիւնի հաստ թղթերի վրայ և թելով կախում ամէն մի կապոցից :

Խնձանից առաջ հարց ու փորձի ենթարկեցին բժիշկ Աթաբեկեանին : Սա հանեց իր զոյգ վկայագրերը թէ Գանձակի և թէ Ռոստօվի բանտից, ցոյց տւեց Սալտիկին, որպէսզի գէթ իր Փլանէլը չհանեն : Միւաներինը հանել էին :

Օգնականն արհամարհանքով մի կողմ հրեց ներկայացւած վկայագրերը և լիտիաբար մրթմրթաց . թէ ոմնը բանտի բժիշկը վաղը կը քննէ, այն ժամանակ կը տեսանենք — հիւանդ էք թէ ոչ :

Աթաբէկեանը բացատրեց, որ ինքը բժիշկ է և շատ է հասկանում իր սեփական հիւանդութիւնը, սրաւախտը, որ դա վտանգաւոր հիւանդութիւն է եւայլին :

Բայց Սալտիկը սովորական մահկանացու չէ, սրտի տեղ նրա ներսում մի քար է դրւած : Ինձ թւում էր, որ նա իր զաւակներին, իր ծծկեր մահկանն անգամ համբուրելիս՝ մտածում է, թէ ինչպէս տանջէ, ինչպէս լլիէ . . . Նրա հոգին հիւսւած է օձի և կարիճի խայթոցներից :

Նա աչքով արեց կանգնած վերակացուներին և ցած ձայնով ասաց .

— Փոխե՛լ զգեստները :

Այդ երկու բառը, միացած աչքով տրւած նշանին, չարագուշակ մի բան ունէին իրենց մէջ :

Բժիշկն ուզեց մի խօսք էլ ասել, բայց վերակացուները, որ բորենիների պէս կանգնած, իրենց զոհին էին սպասում, կոպտաբար, հրելով, հրհրելով ներս տարան :

Երբ ինձ էին հարց ու վորձ անում, աչքս հանդերձասենեակի մէջն ընկաւ :

Զարհուրելի էր : Վերակացու կոչւած մարզագայլերը հանել էին արդէն Լեւոնի բօլոր զգեստները և այժմ հանում էին սպիտակեղէնները : Զոհն ուղղում էր դիմագրել. դահիճները կոպիտ հայհոյանքներով ու հեգնանքներով քաշքում էին նրա շապիկը :

Տրւած հարցերին պատասխանում էի, բայց խեղջաայն կողմն էր, զոհի ու դահիճների աեսարանին :

Լեւոնին, քնքուչ պահւած Լեւոնին հազցրին տաժանակրի մի կոպիտ շապիկ, այն կտորից, որից տոպրակներ են կարում : Միւս սպիտակեղէնն էլ

նոյն «քարէ կտորից» էր : Համնդին նրա գուլպա-
ներն էլ և տեղը տւին նոյն կտորից ոտքերը վա-
թաթելու երկու լաթ , իսկ խլած կօշիկների տեղ
«կտի» կոչւած հաստ , խոշոր և անճռանի ոտնա-
մանները , որ ֆրանսացիները սաբո են անւանում ,
իսկ մեր գաւառացիները՝ «գօնտուրա» : Ամէն մէկ
կիսակօշիկն այնքան մեծ էր , որ լեւոնի երկու
ոտքն էլ մէջը կը մտնէր :

Այդպէս այլանդակած , նրան մենակ առաջ արին
ու տարան :

Հարցումներից օգտելով , ես հանդի լաւ վկա-
յականու ու ներկայացրի .

— Յոյս ունեմ , պարոն կառավարիչ , որ կը հը-
րամայէք իմ ֆլանէլս չհանել , —ասացի ես , երբ
վկայագիրս կարդաց և կողքի Բենեղզերուղին — ու-
տիկանապետին տւեց :

— Դուք ինչո՞վ էիք զրադւում , —հարցրեց նա ,
ձայնը մի քիչ լսելի անելով :

— Ուսուցիչ էի հոգեւոր դպրանոցում . —ասացի
ես , յատկապէս շեշտելով «հոգեւոր» բառը :

— Ի՞նչ էիք դաս տալիս :

— Ֆրանսերէն :

— Ա՛ , ուրեմն դուք ֆրանսերէն գիտէ՞ք , —զար-
մացական ձեւով հարցրեց ոստիկանապետը :

Երեւի կարծում էր , թէ բոլորս գոեհիկ , տգէան
մարդիկ ենք —պարզ աւազակներ , մարդասպաններ :
Ահարոնեանն արդէն ասել էր , որ հոգեւոր դպրա-
նոցի տեսուչ էր , հայ զրող-բանաստեղծ , միւսներն

էլ յայտնել էին, որ իրաւաբան են, բժիշկ, գիւղատնաեւ ևայլն, բայց այդ ողորմելի էակի տխմար դանկի վրայ ամէնից մեծ տպաւորութիւն էր թողել իմ Փրանսերէն իմանալը :

Ես փրկւած էի, որովհետեւ Փրանսերէն գիտէի :
Իմ ֆլանէլը չհանեցին :

Նրբ վերակացուներն սկսեցին խուզարկել իրերս,
աչքս ընկաւ Սելւեանի վրայ : Նրա առնական կերպարանքը, գւարթ, ուրախ գէմքը, մշտածիծաղ աչքերը և ոտքերի հաստ շղթաները ցնցեցին ինձ : Ծամա, չափազանց շատ փոքր զգացի ես ինձ այդ երկաթէ մարդու հետ համեմատելով :

Ինձ զեռ նոր են կալանաւորի զգեստ հազցնում . եթէ պատժեն էլ, ամենաշատը պիտի Սիրիր աջսորեն կամ 3-4 տարի բանտարկութիւն տան . . . և ես ընկնառում, թուլանում եմ : Իսկ ի՞նչ անէ այս մարդը, որ 18 տարի տաժանակիր աշխատանք ունի, նա երբեք «ամիս» չի քաշում, երբեք չի ընկճռում . պրուխը միշտ բարձր, միշտ հպարտ . . .

Բոլորին հազցրին ու տարան, իսկ Արմենակը դեռ այնտեղ էր, մի անկիւն ում կանգնած :

Վերջապէս Սալտիկը դարձաւ գէպի Արմենակը :

— Ինչի՞ համար ես տաժանակութեան դատապարտւած :

— Պրօվօկատօրի և դաւաճանի սպանման համար, — պատասխանեց Արմենակը, շեշտելով ամէն մի բառը : Եւ նրա գլուխը կրկին բարձր էր, կրկին հայութու :

VII

Հազարին իմ զգեստներս էլ :

Արովնետեւ օգնականը հրամայել էր ֆլանքը հանել, վերակացուն հետո մնդմ էր վարւում : Երբ նոր զգեստները հազայ, վերակացուն ծիծաղով ասաց .

— Օ՞հ, ինչ սազում է ձեզ . կարծիս ձեզ համար հն ձեւել ու կարել . սատանան տանի :

Նա զւարճանում էր, իսկ եօ զւարճանալու պիրա չունեի . այնքան թոյն կար կուտակւած իմ յոգնած պրառում, որ լիճ կը կազմէր . . .

Տեին մոխրագոյն վերմակը ձեռքս և առաջնորդեցին գարն ի վեր, գեալ ի անյայտ մթութիւնը, Մեր խմբումն էին նաև բժիշկ Օհանջանեանը, զիանական զիւզանատես Աւետիք Սահակեանը, երկարամեայ ուսուցիչ Հ. Նոհրատեանը և մի երգու ուրիշներ :

Բարձրանալով մի բաւական մեծ թումբի վրայ և երեք երկտր ու ցածիլիկ շէնքերի առջեւից անցնելով, վեր նլանք մի փոքրիկ քարէ սանգուխով և ժամանք մի ցած, մի յարկանի շէնքի մէջ : Դա թիւ 12 կօրպուսն էր (շէնքը), որի մէջ կային երկու մեծ հանրակացարաններ և 8 խցիկներ մենակեաց կալանաւորների համար :

Պահապանը մի երկարահասակ, նիհար, ուժ, մանաւագչմ ծերունի էր . ծնօտից կախուած էր հնդկանաւի բացւած պոչի ձեւով մօրուքը, որին կարծես երբեք սանար չէր զիպել :

Մեզ առաջնորդեցին նեղ ու ցած միջանցքի ներսի ծայրում դժնւող ձախակողմեան ընդհանուր սենեակը :

Մեղ հետ միաժամանակ դուրս բերին և այլ մի խմբակ, որի մէջ ընկաւ Արմենակը:

Դունից դուրս եկանք թէ չէ՝ մեր երկու խմբերի համբաները բաժանւեցին. Մեր խումբն ուղղեց մի քիչ դէպի աջ, միւսը մի քիչ դէպի ձախ: Բայց երկուսս էլ դէպի վեր, դէպի ախոռանման շէնքերը:

Բաժաննելիս կարողացաց սեղմել Արմենի ձեռքը՝ «մնաս բարով» ասել: — «Բարաս, դու հոգ մըներ, — ասաց աննկուն, երկաթ երիտասարդը, — անգամ մըն ալ պիտի Պոլիս հանդիպինք, Քէստէնէ Սուի երթանք»:

Ու բաժանւեցինք:

Դեռ մի քանի երկվայրկեան նշմարում էի Արմենակի երկար հասակը, նրա զինուորական չափածայ քալւածքը, նրա հետ գնացող միւս ընկերներին: Բայց շուտով անցանք Դրդ կօրպուսի աջ կողմը, նրանք ձախ կողմը:

Այլ եւս չէի տեսնում գաղափարի զինուորին, բայց դեռ լսում էի նրա շղթայի համաշափ զբնգնգողները:

Լուս, խաղաղ գիշեր էր: Արմենակի շղթաների շառաչիւնը սլաքի պէս պատում էր գիշերւայ մեծ լութիւնը և գալիս, ցցւում էր տառապող հոգուս մէջ, ցնգում ամբողջ էութիւնս:

Նրանց ամէն մի զնգոցը կարծես մի բողոք էր Եհովայի դէմ, մի հառաջ էր կախաղան հանւած իր երեք ընկերների համար:

Անրակացուն մնձ դղրդոցով բացեց գուոր, և
մենք ներս մտանք :

Այստեղ արդէն 32 հոգի կային մեր դատակից
ընկերներից :

Մի երկար սենեակ էր, ցած առաստաղով : Չորս
լուսամուտ բացւում էին դէպի հիւսիս : Նրանք զե-
տեղւած էին պատի վերի մասում, մարդու հասա-
կից շատ բարձր, առաստաղի մօտ : Նրանց լայնու-
թիւնը կը լինէր մէկ արշինաչափ, իսկ բարձրու-
թիւնը հազիւ $\frac{1}{3}$ արշին : Երկաթէ հաստ վանդակ-
ները ծածկում էին լուսամուտի երեսը : Մի պւելի
մեծ, մի իսկական լուսամուտ բացւում էր դէպի
արեւմուտք : Սենեակի պատն այնքան հաստ էր, որ
լուսամուտի առջեւ մի անազին գոգ էր կազմենլ, և
դա միակ տեղն էր, ուր կարելի էր գնել մեր թէյն
ու շաքարը, պաշարի ողբալի կտորները, որ թոյլ
էին տւել վերակացուները հետներս առնել :

Մեծ լուսամուտի երկու ապակիները կուրւած
էին և սառը քամին ազատ խուժում էր և պարտ-
ւում մեր ցուրտ սենեակում : Այս լուսամուտի վան-
գակները շատ աւելի հաստ, աւելի ամուր էին :

Սենեակի յատակը ցէմինտով էր ծածկուած և
պաղեցնում էր մեր ոտքերն ու ծունկերը :

Երկու երկար պատերի ներքին մասերում, յա-
տակից կէս արշինաչափ բարձր երկաթէ հաստ ձո-
ղեր էին ամրացւած :

Երկար վիճեցինք, թէ ինչի՞ համար ևն այդ եր-
կաթները : Վերջապէս տիրող կարծիքն այն եղաւ,

որ առաջ այդ մեծ սենեակը կօզակների ձիերի պահն
է եղել, և այդ երկաթներից ձիեր են եղել կապե-
իս : Զեխնք էլ կարող երեւակայել, որ գրանք շար-
ժական մահճակալների համար էին :

Տուրտ էր . գողգողում էի :

Նեւոնդ Մելքոնեանի հետ պայմանաւորւեցինք
մէկիս վերմակը փռել տակներս, միւսը վրաներս
առնել և մի քիչ քնել : Առաւօտեան ժամը հ-ի մո-
տերն էր, բայց գեռ լոյս չկար :

Փռեցինք և պառկեցինք : Բայց սառը ցէմէնան
աւելի եւս մրսեցրեց ինձ : Դողոցս աւելի սասակա-
ցաւ : Իսկ Դեւոնդը, որ առողջ երիտասարդ է, քը-
նեց : Վեր կացայ, իմ վերմակով ծանկեցի նրան և
թողի, որ քնի : Իսկ ես սկսեցի բժիշկ Օհանջանեա-
նի հետ գոտեմարտել, յետոյ էլ աթտրմա կոչւող
խազո խաղալ՝ մի քիչ տաքանալու նպատակով :

Այդ էլ ձանձրացրեց :

Մօտեցայ գրան մէջ բացւած ծակին : Դիմացի
հանրակացարանում արդէն կեանքն ակսւել էր : Այն-
տեղ ապրում էին բանւոր կալանաւորներ, մօտ 60
հոգի : Նրանք արդէն զարթնել, լւացւում էին : Ան-
րակացուն գուռը բաց էր արել : Երկու կալանաւոր
հերթապահութիւն էին անում . աւելում էին սե-
նեակը, բնական պէտքերին յատկացւած լիքը տա-
կառը գուրս էին տանում, և այլն :

Վերակացուն նրանց գուռը բաց էր թողել և հե-
ռացել միջանցքի միւս ծայրը : Ես նրան չէի տես-
նում :

Նշան արի մի կալանաւորի , երկրորդին , երրորդին , բայց ոչ ոք չմօտեցաւ դրան ծակին :

Զարժացայ : Մետեխի բանտում այդպէս չէր . մատենում էինք բոլոր սենեակների գոների ծակերին , «քէֆ ու հալ» հարցնում , զրուցում , գիրք տալիս առնում , ուտելիք և խմելիք հրամցնում ևայն : Խակ այստեղ ոչ ոք չէր մօտենում մեր դրանը : Զէի կարող ենթադրել . որ Բենեղզերուզը հակում է , կանգնած երեք միջանցքների կտրւած տեղում :

Բայց ես անհամբեր էի . ուզում էի իմանալ , թէ մեր գործով մեղադրւող այն 17 Հայերը . որոնք ահա 2 տարի է այս բանառումն են , ո՞րտեղ են . արդեօք մեր շէնքի մէջ ոչ ոք չկա՞յ նրանցից :

Կամացուկ հարցրի անցնող կալանաւորներից մի քանիսին . բայց ոչ ոք չպատասխանեց .

Կարծելով , թէ չեն լսում , մի քիչ ձայնս բարձրացրի : Մէկ էլ յանկարծ վերակացուի ծնօտից կաշ ընկած հնդկանաւի աղտոտ պոչը ամբումբաց դռան ծակի առջև : Միրուքի ասաիճանաբար դած իջաւ . և նրա տեղը ծակի առջև փայլատակեցին նրա զոյդ ծաւի աչքերը . . . Զարագուշակ էր նրանց փայլը :

— Հը , ինչ է . ուզում ես կարցեր ընկնել , — կաղկանձեց նա չնագայի ձայնով և կատաղօրէն վայր իջեցրից դրան ծակի երկաթէ փեղկը :

Ետ քաշւեցի : Գիտէի թէ ինչ է կարցեր . երկու ժամ պատժւել էի Մետեխում , համը տեսել :

Կարցէրը մի քարէ պարկ է , առանց լուսամթւ-

աի, սաոր, ցէմենդէ յատակով։ Նետում են այն-
աեղ առանց վերաբկուի, առանց անկողնի, առանց
բարձի թւ վերմակի, յաճախ հանելով բոլոր տաք
հագուստները։ Վերակացուն դռնից ներս է գնում
մի աման ջուր և մի կտոր հաց՝ վրան մի քիչ աղ
զրած։ բնական պէտքերի համար էլ մի անկիւնում
արդէն առաջուց մի աման կայ։

Այդտեղ մարդ կարող է խենթանալ։ Նախ զգում
ես քեզ կենդանի թաղւած, գերեզմանի մէջ։ Սիրտդ
աեղմւում, պայթել է ուզում։ Յետոյ կամաց-կա-
մաց կորցնում ես ժամանակի և տարածութեան
զաղափարր... Նստում ես—զուրտ է։ կանդնում
ես, ստքերդ են յօգնում։ Ուզում ես ման գալ—
աեղ չկայ. ընդամէնը Յ կամ Գ քայլ է տարածու-
թիւնը։ Եշմած վայր ես ընկնում, գլխին սոսկալի
հարթած ստացած կենդանու նման։

Երր դաժան ծերունին հեռացաւ, ուզեցի աես-
նել, թէ արդեօք չեմ կարող փեղկր բանալ։ Փոր-
ձեցի, շրացւնց. ետեւից փականք ունէր։

Այդպիսով ժամանակն սպանեցինք։ Գիշերն ան-
ցաւ։ Լոյսն սկսեց կամաց կամաց բացւել ու մե-
ած տունը, տառապանքի վայրը կեանք առաւ։

Անհամբեր ուզում էի դուրս գալ, աեսնել թէ
ուր ենք ընկել, այս ի՞նչ բանտ է, որ այսքան
զարհուրանք է պարունակում իր մէջ։ Ուզում էի
իմանալ, ուր են տարել միւսներին, ուր են հնե-
րը։ Ուզում էի անկողին, գէթ ներքնակ իննդրել։
Վերջապէս ուզում էի դուրս ելնել, օդ չնշել, եր-
կինք աեսնել, զոնէ մի կտոր կապոյտ երկինք,

Թամը 8ին էր, թէ 9ին, չգիտեմ, որովհետեւ
ժամացուց չկար, — դուռը դղրդոցով բացւեց:

— Դուռս եկէք, կակաղելով կաղկանձեց ծեր
վերակացուն:

Զենո՞ր երկար ժամանակ գոմերում փակւած
հորթերը երբ գարնանը դուռս են տարւում առա-
ջին ան գամ արստ, այնքան չեն ուրախանում, որ-
քան մենք ուրախացանք: Սակայն հորթուկները
կարող են ազատ թոշկոտել, վազվզել, իսկ մենք
պարտաւոր էինք «հանգիստ» պահել մեզ, չաղմկել.
— այդպէս էր հրամայւած:

Երկու հոգի դուռս տարան գիշերւայ տակառը,
երկուն էլ վերցրին ջրինը:

Վերակացուն նկատեց, որ ջրի տակառն էլ դուռս
են բերում, թէև ջուր կար մէջը, դեռ չէր վերջա-
ցել: Բարկացած մօտեցաւ, հայհոյեց, պոռաց,
կանչեց . . . :

Վոյ թափւեցինք 3-4 հասակաւորներս, որ բա-
յառարենք թէ գիշերը դժբախտութիւն է պատահել.
մեր ընկերներից մէկը, սիսալմամբ, ջրի տակառն ըն-
դունել է միւսի տեղ . . .

Վերակացուն, փօխանակ մեղմանալու, աւելի
ևս կատաղեց, ֆրիքաց: Նրա կակաղ լեզուն բար-
կութիւնից աւելի ևս թանձրացաւ: Ինչ լպիրչ հայ-
նոյանք ասես՝ թափեց բոլորիս զլիսին:

— Էյ, ծերունիներ, — դարձաւ նա գէպի Ա.
Սահակեանը և ինձ. — չէք ամաշում. ինչո՞ւ թոզ
տւիք, որ ջրի տակառը կեղտոտեն: Զէք տժա-
շում, դեռ մօրուքներդ էլ ճերմակել է:

Օգաւեցինք, որ մեղ «ծերուկ» պատւաւոր տիտ-
ղոսը տւեց և կծու հայնոյանք չթափեց:

—Դէ՞ն, երիտասարդ են, անքուն մնացած
սխալւել են, — ասաց Սահակեանը բարեկամա-
բար: — Այս անդամ ներիր, այլ ևս չեն անի: Կը
զգուշացնենք:

Մեղմացաւ մեր դահիճը: Զրի տակառն էլ տա-
րան երկու հոգի, թափեցին միջի ջուրը, լաւ լռա-
ցին, ջուր լցրին ու մի երկար փայտ անցկացրած,
բերին սենեակ:

Դուրս շտապեցի: Օդի պաղ հոսանքը լիտուա-
կերպով չնչեցի: Պարզ էր երկինքը, տեսարանը
դեղեցիկ և ինքնատիպ:

Բանտը շինւած է զառիվայրի վրայ և աստիճա-
նաբար իջնում է մինչեւ դաշտը: Բանտի դարպան-
ուղղակի բացւում է դէպի ազատ անծայր տափա-
րակը: Դարպասի դիմաց, 40—50 քայլ հեռաւո-
րութեան վրայ, ձգւում են երկաթուղու զոյգ դժերը,
որ Ռօստօվից դէպի մայրաքաղաքներն են տանում:

Հրաշալի է սկիւթական տափարակը: Նա գնում.
է, գնում անծայր, անվերջ: Նա հողեղէն ծով է, և
ծովի պէս էլ ալիքներ ունի—խորտուբորտութիւն-
ներ, միայն ոչ ապրող, ոչ կենդանի ու յարաշարժ:
ինչպէս ջրեղէն ծովինը, այլ մեռած, յարակայուն,
պինդ:

Սար չկայ, բլուր չկայ, ծառ չկայ: Միայն քա-
միներն են վիոքը ու մեծ—որ ազատ չափ են ընկ-
նում փրփրած նժոյզների պէս:

Երբ արտերը դեռ հնձւած չեն, այլ միայն դեղնած, ակիւթական տափարակը դառնում է իսկական ծով, միայն դեղին, ոսկեգոյն։ Ալէկոծութիւնն այստեղ անկասկած աւելի հաճելի է, քան ջրի վրայ։ Հասկերն են, որ ամէն մի քամուզ շարժւում, ամէն մի շնչին օդային ալիքի առջեւ խռնարհւում են . . .

Արեւը նոր էր բարձրացել. տափարակն ստացել էր դեղնակարմիր երանդ, որ երեկոյեան վեր է ածւում մոյզ մանուշակագոյնի։

Մեր սենեակը գտնւում էր բանափ ամենաբարձր մասում և ընդարձակ հորիզոն ունէր։

Դեղնաւուն դաշտերի միջով, հսկայական օձի պէս, ոլոր-մալոր անցնում էր Դօնի մի վտակը։ Նա կենդանի չէ մեր փրփրալի գետակների պէս, ոռ քար ու ժայռի վրայով ցատկելով, գահավէժ արագութեամբ սլանում են առաջ, ճեղքելով բլուրների ու լեռների սրտերը։ Նրանք կայտառ են, աշխոյժ, տեղ-տեղ կատալի։ — Սա դանդաղ է, անցնում է լայն ու տափակ եզրների միջով, առանց քարերի, որոնց հետ կոփու մղէ, առանց ժայռերի, որոնց գարնուի ու փոշիանայ, նորից կեանք առնելու համար։

Մի վայրկեան զմայլւած նայում էի այդ գետին ու սկիւթական տափարակին, և սիրաս թռա՛ւ, թռաւ դէպի Լոռու և Դիլիջանի ձորերը, Զանգեզուրի լեռներն ու քարանձաւները, դէպի Արագածն ու Մասիս։

Կայծակի պէս արագ սլացան այդ համեմատութիւններն ուղեղիս միջով . . .

«Արդեօք նոյն տարբերութիւնը չկայ մեր զեռների և այս տափարակի ժողովուրդների միջև», մը-տածեցի ես:

Պէտք էր շարժւել: Զանազան կարիքներ հոգալուց յետոյ՝ մեզ հրամայեցին քայլել, բայց զոյզզոյզ, դպրոցական աշակերտների նման — հանդարտ, պարկեշտ, առանց բարձր խօսելու: Ու սկսսեցինք անմտօրէն յետ ու առաջ անել — մերթ դանդաղ, մերթ արագ: Իրաւունք չունէինք մեր շէնքի երկարութիւնից անցնել այն կողմ, ուրիշների սահմանը:

Շատ նայեցինք, աչք ածեցինք այս ու այն կողմ, որ տեսնենք, թէ ո՞ւր են միւսները, բայց ի զուր, այս անզամ ոչ ոքի չտեսանք:

Երեւաց հեռուից Սալտիկը, արդէն քունն առած, կազզուրւած: Նա սիրամարզի պէս փառածու դանդաղ, շորորախվ ու նազելով, գալիս էր դէպի մեզ. «ստուգելու», համարելու իր «հօտը», իրեն յանձնւած «անասուններին»:

Մեր վերակացուն այլեւս չկար, փոխւել էր: Նրան յաջորդել էր միջանասակ, գիրուկ և կարմրերես, 40ի մատ մի մարդ: Դոնէ դէմքը բարի էր երեւում:

Նկատելով «ստուգման» եկող Սալտիկին, գիրուկ վերակացուն հրամայեց մեզ ներս դնալ: Կարգով, առանց աղմուկի, առանց շտապելու, զոյզզոյզ ներս մտանք, և զուռը կրկին փակւեց մեր վրայ ահազին շառաչով և զրոխիւնով:

VIII

Հազիւ մի քանի բոպէ անցած, երկաթէ ժանդուտ սողնակը կրկին ճռչաց և դուռը բացւեց. մի տմբողջ նուագախմբի բոլոր ձայներն անկանոնապար հանելով :

Ներս մտաւ նա ինքը — մեծն Սալտիկը :

Տէր Աստւած, ո՞րքան փքւած դոռոզութիւն, ո՞րքան սեփական իշխանութեան զիտակցութիւն կար նրա քայլւածքի, կեցւածքի և մանւանդ, խօսելու եղանակի մէջ : Կայսրն անգամ այդքան «սեփական արժանաւորութեան գիտակցութիւն» չունի :

Դուռը բացւելուն պէս, վերակացուն բղաւեց.

«Ստուգում, — Ուղիղ կանգնել» :

Եւ մենք՝ արդէն լաւ վարժւած բանտային, կարգապահութեան, զոյգ-զոյգ շարւեցինք :

Այս անգամ Սալտիկը չը բաւականացաւ միայն թիւը համարելով, ինչպէս միշտ, և հեռանալ : Նա կանգնեց, ծանր ու վեհօրէն գուրս քաշեց զրպանից թուղթն ու գրիչը և բարեհաճնեց «գծել» :

Մէկ-մէկ հարցուց լոլորի անունները և զբաղմունքները : Բոլորն էլ ասացին և նա գրեց :

Յետոյ յետ դարձաւ ու մօտեցաւ զիւղատնաեւ Ա. Սահակեանին, որ բաւական խոշոր պեսատկան պաշտօնեայ է, բժ. Օհանջանեանին և ինձ : Հրամայեց մեղ հաւաքել մեր ունեցածը և իրեն հետեւել :

Նօհրատեանը խնդրեց, որ իրեն էլ տանի մի այլ անեակ : Նրանից էլ հարցրեց զբաղմունքը, և երբ

իմացաւ երկարամեայ ուսուցիչ լինելը , նրան էլ խտոնեց մեղ հետ :

Մնացած 32 հոգին հեղնօրէն ժպտացին . «Տանում են լաւ սենեակ , — բաղդաւոր էք . . . մեծերդ միշտ բաղդ ունէք , » և այլ այդպիսի կէս-լուրջ , կէս-կատակ սրախօսութիւններ ու դժգոհութիւններ էին կամացուկ փնթփնթում :

Մենք — չորս էլ , վերցրինք վերմակներս և մտքերիս մէջ ուրախ էինք , որ այդ ճիւաղների սրբում գեռ այդքան մարդկութիւն մնացել է . գոնէ հասակաւորներին մի քիչ աւելի լաւ տեղ են տալու . . .

Դուրս եկաւ Սալտիկը մեծ սենեակից , մենք էլ ետեւեցինք նրան , «մնաք բարով» ասելով մեր ընկերներին և խղճահարւելով . որ նրանք մնում են վաս պայմաններում , իսկ մեղ տանում են աւելի աւ տեղ :

Նեղ միջանցքով եկանք դէպի դրաի դուռը և կանգնեցինք երեք միջանցքների միացած վայրում :

— Աղաս խուց ունիս , — հարցրեց Սալտիկը տիրաբար :

— Այո՛ , ձերդ բարեծնունդութիւն . դէպի ձախ թիւ Յ խուցը դատարկ է , — ասաց վերակացուն , ձեռքով գլխարկի մօտ բարե բանած :

— Իսկ ո՞ւր տարաք նրան — կրկին հարցրեց Սալտիկը . «Նրան» բառին մի խորհրդաւոր արտայայտութիւն տալով :

— Արդէն , ձերդ բարեծնունդութիւն — վրայ բերեց վերակացուն , ձեռքը միշտ զլխարկի մօտ պահելով . «Աղաս է խուցը» :

Սալտիկը մտաւ ձախակողմեան միջանցքը և
կանգնեց մի ցած դրան առջև :

Դուռը բացւում էր խոր, հաստ պատի մէջ, ուղ-
ղակի սենեակի մէջ, պատի ոչ արտաքին, այլ ներ-
քին մակերեւոյթի կողմում ամրացած։ Երկաթէ էր
ա և մոցգ, աղտոտ, թանձր կարմրագոյն ներկւած։
Նրա մէջտեղից մի քիչ վերև մի քառակուսի ծակ
կար, փոքր, հազիւ ամէն մի կողմը 4-5 մատնա-
ծածկւած, առանց բաց անելու հնարաւորութեան։

Մակն այնպէս էր յարմարեցրած, որ երբ վերա-
կացուն միջանցքով ման դայ, առանց կռանալու,
այնտեղից տեսնի խցի մէջ գտնւող—պառկած, նրս-
ած, թէ կանգնած կալանաւորին, նրա իւրաքան-
չիւր շարժումը։

Վերակացուն բաց արեց դուռը։ Նա ծանր էր
և դանդաղաբար էր բացւում։

Ինձ թւաց, թէ դա դուռ չէր, այլ վերեղմա-
նացքաբը։

Ներս մտանք։ Իսկական քարէ տոպրակ, կտ-
տաբեալ գերեզման։ Յատակը ցէմենտ էր։ Տանի-
քից բացւած էր մի փոքրիկ պատուհան միայն եր-
կաւ ապակիով, որոնցից մէկը, բարեբաղդաբար,
կոտրւած էր։

Սենեակի մի անկիւնում մի երկաթէ վանդակ
կար, հաստ ու բարձր երկաթներով։ Նրա տակ զե-
տեղւած էր վառարանը։ Պատերի միւս մասերը
պինդ էին, հաստ, քարուկիր շինւածքով. քանդել.

ական փորել անհնար էր : Մնում էր վառարանի ,
որ ամենահարւածելի տեղն էր այդ գերեզման-սե-
նեակում . այն էլ ցանցի մէջ էին առել . հաստ եր-
կաթէ վանդակի մէջ , որ բարձրանում էր զրեթէ
մինչև առաստաղը :

Վառարանից դէպի ձախ , պատն ի վեր տեկուած
էր մի հաստ , միաձոյլ երկաթէ շրջանակ . նրա ներ-
քեւի երկու ծայրերն ամրացած էին պատին . իսկ
վերին ծայրերն ազատ էին :

Վայր իջեցրի : Դա մի շարժական մահճակալ էր ,
պատին ամրացրած : Երջանակին փաթաթուա են
մի հաստ ու պինդ կտոր , պարաններով կապկա-
պում , դառնում է մի մահճակալ , մէջտեղը մի քիչ
փոս ընկած : Այդ փոս մասի մէջ է մոնում կալա-
նաւորը և քնում :

Վերակացուն ի տկոյն նկատեց , որ մահճակալը
վայր եմ իջեցրել . բարկացած հրամայեց բարձրա-
ցընել և կապել :

Վերմակներու ծալծեցինք և երկար փոեցինք
իրար վրայ զռան դիմացի պատի տակը : Զօրս վեր-
մակն իրարու վրայ գալով մի քիչ բարձր նստելու
տեղ կազմեցին : Բայց դեռ նստել չէինք կարտղա-
նում , հարւածի ոյժը գեռ շատ էր նոր և ուժեղ :
Մենք կարծում էինք , որ մեզ պատիւ են անում ,
լաւ տեղ են տանում , յանկարծ բերին այս ծակը ,
այս քարէ պարկը , այս գերեզմանը խցկեցին : Ըստ-
հանուր սենեակը հազար անգամ նրանից լաւ էր :

Եթէ տանիքից բացւող նեղիկ ու խղճուկ զու-

սամուտը չլինէր, սա իսկական կարցեր կը գառնաք : Երկայնութիւնն ընդամենը 5 քայլ էր, լայնութիւնը մօտ 4 քայլ : Ներս մանելիս, դրան աջ կողմին անկիւնում մի կարմիր ներկւած դոյլ էր զրւած բրնձական պէտքերի համար . իսկ ձախ կողմում միշտառ փոքր դոյլ՝ ջրի համար :

Պատերը գորշ գոյնով էին ներկւած : Գրեր ներեւացին : Մօտեցաւ կարգալու : Ահա մի արձանագրութիւն, որի վերեւում ծուաթեւ խաչ կար : Ցաշի տակը գրւած էր .

«Ես, Խարկօվի բնակիչ այսինչս, ամբաստանուելով աւագակային յարձակման մէջ . բերեցի այս բանուր 1908 թւի այսինչ ամսին : Եզրայրս—այտինչր— չստած է Խարկօվի բանտում : Այս զիշերը, 1910 թւի հոկտեմբեր 12-ից լոյս 13-ի գիշերը տանում են ինձ կախելու : Մնաս բարով ժողովուրդ, մնաս բարով ազատութիւն» :

Իսկոյն պարզւեցին Սալտիկի և վերակացուի խորհրդաւոր շեշտեր կրող բառերը :

Գիշերը, երբ մեզ կայարանից բերում էին «զգեստաւորման» խայտառակ ծէսին, այդ ժամանակ այնտեղ, քաղաքից դուրս, որ և է մի անբընակ վայրում, հասարակ երկու զերաններից պատրաստւած կախաղանից և նոյնքան հասարակ մի աղտոտ պարանից քարշ էր ընկնում մի մարդկային էակ, ճօնում, խոխոռում, լեզուն դուրս էր գցում ու կապտում . . .

Աւ այդ բոլորը եղել էր մի քանի ժամ, միայն

մի քանի ժամ առաջ։ Դեռ նրա չնշած օդը չէր մաք-
քւել այս խուցից։ գեռ նրա խմած ջրի մնացորդն է
այսաեղ, այս մոյզ-կարմիր ներկւած փոքրիկ դոյլի
մէջ։ գեռ նրա հոգին, նրա կրծ ոի տակ յուզւազ
կատազի փոթորիկների վերջին ակկօրդները կարծես
հնչում էին այս յարկի տակ . . .

Բոլորս էլ հաւաքւած մի անկիւնում։ Ջրի դոյլի
գլխի վերնւը, ութիր աչք յառած մի կէտի, կար-
դում ու կրկին կարդում էինք այդ մի քանի տող
ինձնազիր արձանագրութիւնը, մարդկային հոգու
այդ վերջին հառաջը, վերջին ճիշը։ Նա չա՛տ աւե-
լի հետաքրքիր է, քան նշանագրերը։

Եւ ո՞րքան ընորոշ էր։ Մի հասարակ աւազակ
է, դատւել է «աւազակային յարձակման» համար։
Քայց երբ ոռւսական մարդակեց օրէնքը տանում է
նրան կախելու, թշւառ զոհը բացագանչում է։

«Մնա՛ս բարով, ժողովուրդ, մնաս բարով, ա-
զատութիւն»։

«Փողովուրդ», «ազատութիւն»— դրանք էին
բնորոր ազատամիտ, արմատական ու ընկերվարական
տարրերի նշանաբանները։ դրանց համար են տա-
ռապում ու տնքում ոռւսական բանտերում հարիւր
հազարաւոր քաղաքական «յանցաւորները»։

Սրաատուքները հանգարատ, մնդմիկ հոսում էին
աչքերից։ կարծես ուռած ու լցւած սրտիս աւելորդ
բեռներն էին, որ զուրս էին հոսում ինձ հանգատա-
ցքնելու, սփոփելու համար։

Բոլոր ընկերներիս էլ սրտերը լցւած էին։

Քաշւեցինք մի կողմ, լուռ, անխօս նստեցինք
պատի տակ փռած վերմակներիս վրայ՝ անտէր որ-
բուկների պէս. երկար ժամանակ գեռ չէինք հա-
մարձակւում խանգարել մեր խցիկի գերեզմանային-
անդորրը, ուր զեռ սաւառնում էին կախւածի մտքի-
ալիքները:

Եւ ականջիս անգագար հնչում էր զոհի վերջին
հառաջը, նրա սրտի վերջին բարախումը, որ հեծկ-
տում էին.

«Մնաս բարով, ժողովուրդ, մնաս բարով պ-
ղատութիւն» :

Մնաս բարով և դու անյայտ, անծանօթ տա-
ռապեալ: Հանգչիր Մայր-Հողի սև գրկում: Եւ թող
քո հառաջը կայծակի պէս սլանայ, վարակէ ու վա-
ռէ այս անծայր տափարակներում աւազի պէս սրփ-
ուծ մարդկային էակների հոգին, զարթեցնէ նրանց
մէջ բողոքի սրբազան կայծը, ըմբոստացման պաշ-
տելի կրակը:

Հանգի՞ստ քեզ, թշւառ տարագիր:

Ահա գուռը կրկին բացւեց ճռնչալով ու ճշալով:
Ես վերացել, հեռացել էի այս աշխարհից: Ու երբ
դուռը բացւեց, այնքան էի տարւած կախւածի ու
առհասարակ կախաղանի մասին զանազան ֆանտէ-
զիներով, որ ցնցւեցի. կարծում էի թէ եկել են
մեզ էլ կախելու տանեն: Եթէ այդպէս չէ, էլ ին-
չո՞ւ են այս սենեակը բերել, մահապարտների խուցը:

Զգաստացայ, վայր իջայ այս աշխարհը: Վերա-
կացուն էր. հրամայում էր հաց վերցնել և թէլէ
համար եփած ջուր:

Հացը ներս առանք, սեւ, ոռւսական հաճարէ հացը, որ համեղ ու դիւրամարս է։ Խսկ ջուր առնել թէյի համար չէինք կարող. որովհետև ոչ թէյամաններս էին մեղ տւել. ոչ էլ թէյ ու շաքար տանէինք։

Դուռը փակեցին։ Սեւ հացն առած, իրար երես էինք նայում։ Ի՞նչ անել, ի՞նչպէս թէյ ու շաքար տւզել։ Առառօտեան, երբ Սալտիկը մեղ այս գերեզմանն էր բերում, կարծելով թէ լաւ տեղ ենք գընտեմ, շաապեցինք և մեծ սենեակից ոչ թէյ ու շաքար բերինք. ոչ էլ պանիր, ապուխտ կամ մի քիչ երշիկ։

Բախսեցինք զռան փոքրիկ ապակին. վերակացուն եկաւ. Խնդրեցինք, հասկացրինք. որ մեր թէյն ու շաքարը, մեր ուտելիքը մեծ սենեակում ևնք թողել, չէ՞ կարող արդեօք այնքան բարի լինել, որ գնայ բերէ։

— Աւկարելի է. — ասաց վերակացուն. — սենեակից սենեակ խստիւ արգելւած է որ և է բան տալ։

Ասաց ու հեռացաւ. Կրկին սկսեցինք զարմացած իրար երես նայել։

Մարդկային ուղեղն անգործ մնալ չէ սիրում։

Վերակացուն ներս բերեց մի տաքուրէս (փայտէ նատարան). Աղտոտ, թերմաշ տաբուրէտի վրայ գծեր առ քառակուսիներ կային։ Պարզ էր. բանտարկեալները գծել էին «տամա» կամ սանթրանն խաղալու։

Ես և Օհանջանեանը անմիջապէս սկսեցինք սեւ հացի միջուկը տրորել, խմոր դարձնել. հունցել,

կասի պէս փափկացնել : Կիսեցինք : Ամորի մի մասի
հետ խառնեցինք մի քիչ այրւած թղթի մուր , իսկ
միւս կէսը թողինք իր բնական գոյնով : Շինեցինք
երկ-երկու թագաւոր , երկ-երկու թագուհի և այլն :
Սանթրանճը պատրաստ էր :

Մեր երկու շեմպիօնները՝ երկու Համազառապներն
էին .— Օհանջանեանը և Նօհրատեանը : Առաջին օրից
իսկ նրանք իրար հետ բռնւեցին : Խաղում էին ա-
մենայն ուշադրութիւնով ու կրքով . կատաղուէն :
Նւ այդ մրցակցութիւնը շարունակւեց ամբողջ ժա-
մանակը , Յաճախ պատահում էր , որ խիստ նեար-
դային Նօհրատեանը կուռւմ , մեղադրում էր բժշկին
— «Իսիար փախցնելու» մէջ . այսինքն՝ ոչ վարպետո-
րէն խաղալու , այլ լոկ կոտորելով զրադելու մէջ :

— Ես յարձակման պլան եմ պատրաստում , —
առաւմ էր տարւած ու գրգռւած Նօհրատը .— իսկ
դռւ խիար ես փախցնում :

— Հապա . — առում էր բժիշկն իր բարակ ձայ-
նով .— իս էլ իմ պլանու ունեմ . կարող իս՝ դուն
էլ խիար փախցրու .

Այ այսպէս ամէն օր կռւում , ամէն օր իրար
մեղադրում , բայց և ամէն օր սիրով խաղում էին
իրար հետ : Մէկ էլ թունդ նեղանում էր Նօհրատը .
Երգւում այլ եւս երթեք շխաղալ . բայց հետեւեալ
որը կրկին նստում էր սանթրանճի առջև . բժիշկի
դիմացը . կրկին տարւում , կրկին բզաւում , ձբ-
շաւմ . . .

Նոր սենեակը բերւելուց հազիւ կէս ժամ ան-

ցած, վերակացուն հրաւիրեց գուրս գալ պառյախ:

Չորս հոգով դուրս եկանք: Հրամայեցին պառյախ անել՝ իրար ետեւից մէկ-մէկ գնալով: Կալ ծեծող եզների պէս պառյախ էինք անում և աչքերս չորս կողմ նետում:

Ճիշտ մեր կարգին կար մեր շէնքի նման մի ուրիշ շէնք, թիւ թ-րդ, որ մերինից բաժանւած էր մի փողոցով: Այդ տեղից ահա գուրս եկաւ մարդկային հագուստով մի կարճասակ մարդ: Նախ կարծեցինք, որ պաշտօնեայ է. բայց գլխարկը պաշտօնեայի չէր: Երբ մի քիչ շտապով ան կողմը գընացինք, ճանաչեցինք. մեզ ծանօթ Դաւիթիթ Զառարեանն էր, որին Պետերբուրգում ձերբակալել և աշնա երկու տարի էր պահում էին այս դժոխք-քանառում իրը Դաշնակցական:

900 բանտարկեալների գորշ զանգւածի մէջ միայն նա էր, որ իր զգեստները պահել էր, այն վէ ով գիտէ, զրսից բարեկամները որքան էին խնդրել:

Մի երկու ամիս յետոյ երեւաց մի կարճահասակ ծերունի եւս, մի սնանկացած վաճառական, որին պարտատէրերը բանտ էին նետել, իրը չարամտօրէն սնանկութիւն հրատարակած և իրենց առնելիք դըրամները ռտակովն արած: Նա էլ մի կարճահասակուն Դաւիթիթի պէս կարճատես մարդ էր, միայն այն խառն մեծ մօրուքով և մութ ակնոցով:

Բարեւեցինք: Դաւիթո պատասխանեց, բայց ակներե էր. որ չճանաչեց հեռուից, մեր նոր զգեստների մէջ, որոնք զարմանալի մի յատկութիւն ունեն. նրանք հաւասարեցնում են իրար բոլոր բան-

տապրկեալներին : Նրանք վերացնում են ամէն գա-
ռային ու դասակարգային տարրերութիւն : Այդ գեղ
քիչ է . նրանց մէջ գոզը , սրիկան , մարդասագանը և
գաղափարի զինորը , լրագրագետը , յեղափոխական
հերոսը — բոլորը , բոլորը միախառնում , իրաք ևն
հաւասարում . . .

Մակայն , կարելի է բարձրացնել ստորիններին և
հաւասարեցնել նրանց իսկական , արժանավայել
մարդկանց : Աչ , բանտն այդ չէ անում . նա չէ սփ-
րում բարձրացնել . նա սիրում է կրծել , ստորա-
ցրնել մարդկային էակները և նրանց մէջ տեսնել
միայն ու միայն պատժի ենթականեր :

Այդ բանում Նօվօչերկասկի բանտը մի բացառիկ
զիրք ունի :

Քնութեան տակ գտնուող անձերի զգեստները
չեն ինչում բանտերում : Այդպէս է սրամագրում
օրէնքը :

Թայց Առւանդանում օրէնքը զրւած է նրա
համար , օր աշխարհի զօրաւորները ոտքի տակ տան ,
արհամարհնեն այն :

Մեծ է Ն . Զերկասկի բանտը : Համեմատաբար
բած են նրա պարիսպները : Այնտեղից փախչելն
այնքան էլ գժւար չէ . եղել են բազմաթիւ յաջոզ
ու անյաջոզ փորձեր :

Ահա այդ փախուստների առաջն առնելու հա-
մար , բանտապետը դիմել է կօզակների ատամանին
կամ շրջանի կառավարչին , նա էլ նախարարութեա-
նը . և թոլլաւութիւն է ստացւել այդ բանտի բոշոր
կապանաւորների զգեստները փոխել :

Ման էինք զայիս մեզ համար գծւած ուստի և դիտում մնը նոր զգեստները։ Խօկապէս բոլոր ընկերներս զաման, որ ինձ չառ են սագում կարծես իմ վրայ չափած ու ձեւած մինէին։ Նրանք սագում էին մի քիչ բժիշկին էլ, աւելի նւազ՝ Եօն-թատին, իսկ Սահակեանին։ ամեննեւին չէին սագում։ Պանտախօնը հագնելուն պէս իսկոյն կարերը քանզ եցին երկու կողմից էլ։

Եթէ զծ Նօհրատեան, քանի՞-քանի անզամ կործոց Սահակեանի զգեստները։ Բայց նրանք նեզ էին կրկին պայթում էին կարերի տեզքից, և Նօհրատոց կրկին ու կրկին կարում էր մնձ համբերութիւնով, տաանց տրտնջալու, կատակելով ու սրախօսելով։ Անուհետեւ նա զարձաւ մեր մշտական զերձակը։

Վերջապէս մեզանից երկու շնչնք ներքեւ երեւացին ծանօթ դէմքեր։ Նրանց էլ հանել էին պատրափ։ Քարեւում էինք իրար, ձեռքերով նշաններ սնում։ Ճանաչեցինք մէկին գրաւարան Պ. Պուրաբին։ Սեսոյ ենթազրեցինք, որ այն կարճանասակ ու սուլին էլ Արքանամն է, մրաս ակնոցաւորը Լեւոնը, և այլն։

Մեր շարժումները նկատեց զերակացուն և բարկացած հրամայեց զերջացնել զրօսանքը, իրու մանել։

Հնազանգւնցինք։ Այդ վայրկեանին զուրս բնիքն Արզութեանին, Նալբանտեանին, Փաստարան Մուշեղեանին և ուսուցիչ Հ. Սոզօմոնեանին զբացի չնքից։ Հազիւ մի վայրկեան զտանք բարեւեցու, Նրանք էլ մեզ բարեւեցին, բայց նրանց վերակա-

շուն զարհութեղի էր . նկատեց նրանց բարեւն ու
ծիծազը և սկսեց լուսանքների նեղեզը . . . Դեռ բա-
ւական ժամանակ մեր տանիքի լուսամուտից հու-
նուու համեռ էին վերակացուի փողոցային հոյս-
յան քնները . . .

Մասնք ներս : Հազիւ գուսը փակել էին վրա-
ներս , և հազիւ նատել էինք հանգատանալու . երբ
նրեաթէ հաստ աղնասկը կրկին քաշեցին և գուսը
կրկին բացեցց :

— Բանտապետը զազիս է . ուզի՞զ . — բառեց վե-
րակացուն :

Առքի երանք : Աւրախ էինք . որ վերջապէս
բանտապետը գալիս էր . կարող էինք մեր ցաւը
այսուել . որոչ զիջումներ իննզրել :

Հաստ , սև վերաբերեան հագած , հաստ զաւա-
գանը ձեռքին , սև , լրդուտ փափախը զիսին և նր-
կարապիզ կօշիկները հազին , զանգանդ ներս ժուա-
բանտապետը :

Քայլելիս նա ձեռքի հաստ զաւագանով տվնքան
պիտօք էր խիսում գետնին , որ կարծես հրաժայելիս
չինէր .

« Դոգա ! երկիր , ես եմ վրայովդ քայլողը » :

Արքան որ պինդ , հաստատուն հայրածներով
կրցնում էր գաւազանը գետնին , նոյն քան էլ զան-
գազ , մտածերով էր փոխում ամէն մի բայլը :

Բանտապետը մի բարձրահասակ և թիկնեղ ծե-
րունիք էր : Ճակատը . քիթը ականջները , թերանի-
տենին ինչ սովորական էին , առանց որ եւ է սադան .

նայատուկ» նշանի : Ածիրած ծնօալ կլոր էր , երեսք
տափակ՝ տիպիք մօնդօլական երեսի պէս :

Երկու բան միայն ոռոկալի էին նրա գէմքի զրայ ,
առաջին՝ զոյգ աչքերը , երկրորդ՝ գէմքի ընդհանուր
սահնութիւնը .

Նախ՝ աչքերը :

Չարագուշակ էին նրանք ոչ միայն բանագր-
կեաների , այլ և ամէն մի մարդու համար : Ուժ
հետ որ խօսում էր այդ մարդը , շագանակագոյն աչ-
քերն այնպէս էր յառում նրա աչքերին , այնպէս
ծերունիօրէն հարցական ձեւով . այնպիսի մի թափան-
ցել կամեցող հայեացքով , որ մարդու միսը զրայից
թափիւում էր , ամրող ջղային համակալ գութիւնը
ցնցւում : Թւում էր ; թէ այդ խորհրդաւոր , ծակող
հայեացքից ոչինչ , ոչինչ չէր կարելի թագցնել . նա
ներս կը սոզայ , նա կը թափանցէ մարդու սրափ և
հոգու ամենախոր ծալքերը և այն տեղերից գուրա
կը քաշէ խոր պահւած գաղտնիքները :

Այդ աչքերը գարշելի էին : Մարդ և զգուում ,
և զախենում էր նրանցից :

Աւելի եւս չարագուշակ էր նրա գէմքի ընդհա-
նուր արտայայտութիւնը : Թափանցող հայեացքն
ուզգելով մարդու զրայ . այնպիսի մի գէմք էր
ստանում , որ խօսակիցն սկսում էր ցուրտ զգալ .
Հայեացքներն իբր զոյգ շամփուր ցցելով աչքերիդ
մէջ և հնգուեդ խօրքերը պրապտելով , գէմքին տափա-
էր ըրոնզէ արձանի արտայայտութիւն : Աւ անկա-
րեցի էր ինում բարոնել թէ ուրդեօք հոսկացաւ : ա-

առաջ, հաւանեց, բարկացաւ, ու բախացաւ, թէ
ախքեց . . .

Ամենայն վատահօւթեամբ կարելի էր պնդել, որ
նա նոյն պաղարիւն ձեւով կ'առնէ ուուր զանակը,
կը մորթօտէ իր զաւակներին, անվրդով վայր կը
դնէ արիւնուա զէնքը, գանդաղ, առանց շտապերու,
առանց յուզումների, կը բուայ ձեռքերը, հանդարտ
ու հանգիստ կը նոտի սեղանի մատ և մեծ ախոր-
ժակով հաց կ'ուտէ, կ'աղօթէ իր սեփական Աս-
տծուն . . .

Նրա անունը մննք բորենի կնքեցինք : Աւելի
յարմար անուն անկարելի էր : Ոմանք առաջարկե-
ցին ո՛ւ, ոմանք էլ վազր, բայց ոչ մէկն այնքան
չկպաւ նրան, որքան «ըսրենին» :

Ներս մտաւ մեր խուցր : Յուրատ զերեզմանն ա-
ւելի եւս սառեց նրա ներկայութիւնից, նրա ար-
ձակած պաղութիւնից :

— Բարեւ, ի չչպէս էք, — հարցրեց կամաց,
գանդաղ, կարծես մարդ չէր խոսողը, այլ մի ար-
ձան,

Դանդատւեցինք, որ մէկ հոգու նամար յատկաց-
ւած սենեակի մէջ բերել լցրել են չորս մարդ.
որ յատկակը ցէմէնու է, սառը, մարդ կարող է ոսկ-
րացաւ սատանալ, որ մեր զգեստները վուր են փո-
խել, որ մեր վերմակները տան եւայլն, եւայլն :

Դանդատւեցինք երկար, եկեղեցում «փոխ» ա-
ռաղ աիրացուների պէս — մերթ մէկս, մերթ միւսս:
Քայլ քանատապետը լսում էր, ամէն անզամ իր կա-
ռուն, երկաթէ հայեացքի ուուր ծայրերը միսելով
խօսողի աչքերի մէջ :

Լսեց գանգասաները, հրամայեց որ թուղթ ու դրիչ բերեն, մել տան, զրենք մեր ասելիքները և ուղարկենք առամանին, շրջանի գլխաւորին, որովհետեւ այդ բոլոր խնդիրներին գոհացում տալ կարող է միայն առամանը:

— Իմ իրաւոնքից բարձր է, — աւելացրեց նա: — Եթէ առամանը հրամայէ, մենք պատրաստ ենք կատարելու:

Միակ անմիջական օգուտն այն եղաւ, որ Պողոս տւեց մեծ սենեակի ընկերների մօտից սահմալ թէյ, շաքար, մի քիչ երշիկ և անզուխտ: Բացի այդ, հրամայեց տանել հանգերձատուն և այնտեղ մեր կապոցներից հանել ու բերել երեք ձեռք սպիտակներէն, երես սրբիչ, թաշկինակ և անկողնի օստան:

«Մնաք բարով» չասաց գնալիս, այլ սառը, առանց մի զիծ անդամ շարժելու դէմքի վրայ, գանգալ դուրս եղաւ, հաստ գաւաղանով ծեծելով երկիրը:

Կառագարիչը նոր էր հեռացել, նոր նստել էինք պատի տակ և մեր տպաւորութիւններն էինք յայտնում: Իրար այդ սոսկալի էակի մասին, երբ զանգը խից և ինչպէս երեւում էր, զա ճաշի զանգն էր:

Մեզ չուզարկեցին ճաշ բերելու մեր խցի համար, այլ ուղարկեցին մի հաօարակ կալանաւոր, որը մեր չէնքում ճառայի պաշտօն էր կատարում:

Դուռը բաց տրին, և պարաւնիկը (ծառան) ներս բերեց մի կլօր պղնձէ կեզառաւ աման, մէջը մի մոխուրացոյն հեզուկ: Դրեց ամանը տարութէտի վրայ, դուրս եկաւ միջանցք բերեց և հատ վայուէ խռարու:

կարճ պոչով կըոր դգալ, տւեց մեզ, մի թիթեղեայ
ամանով էլ աղ բերեց ու գնաց: Կերակացուն փա-
կեց գուռը:

Եեզտոտ ամանն անոռի վրայ էր, սենեակի մի-
ջավայրում: Գոլորշին ալիք-ալիք վեր էր բարձրա-
նում և թիժու կազամբի հոտով լցնում փոքրիկ
խոցը:

Մեզանից ոչ ոք դեռ չէր մօտենում կերակրին:
Դէ յքերս թթւեցրած, զզւանքի պարզ արտայա-
տութիւնով, ծուռ-ծուռ նայում էինք այդ «բօրչ»
պատւաւոր անունը կրող կերակուրին:

Ամէնից առաջ մօտեցաւ բժիշկը:

— Պէտք է ուտել. անհրաժեշտ է վարժւել: Առ-
ված խօմ չպիտի մնանք, Կայօրի է հարկաւոր, օ-
րական տոնւազը 3000 կայօրի, որ մարդ ապրի,—
ասում էր մեզ և, կարծեմ, իրեն եւս համոզելու
համար:

Յետոյ մօտեցաւ Նօհրատը, ապա և մնացած եր-
կուս: Բոլորւեցինք կեզտոտ ամանի շուրջը, ա-
ռանք կեզտոա դգալները, հացի միջուկով մաքրե-
ցինք և փորձեցինք ուտել: Բժիշկը խմեց տուածին
դգալը և «օխ, լաւն է» ասաց, որին ոչ ինքն էր
հաւատում, ոչ էլ մնանք... Միւսներս էլ սկսեցինք
համբ տեսնել, քիչ-քիչ ուտել:

Մի քանի օր յետոյ վարժւեցինք ուտում էինք
ևմէ ոչ ախորժակով, զոնէ եռանդով, նոյն իսկ կա-
տակներով, իրաք ձեռքից խլելով եզի քիմքի ու
շրիժունքների կտորները—սպիտակ, ու ու շերտա-
ւոր: Կերակրում եղած մսի միտակ ողբալի ներկա-
յացուցիչները դրանք—քիմքի ու շրիժների այդ ու
սպիտակ կտորներն էին:

Աւելի ուշ, մէկ, մէկուկէս ամիս յետոց, տեսաց
թէ ինչպէս էին պատրաստում մեր համադամ խոր-
ափկները :

Մի հսկայական կաթսայի մէջ նախ եռացնում են
ջուրը, յետոյ լցնում թթու և աղի կաղամբը. մի
քիչ էլ ու աղ աւելացնում, եթէ անալի է լինում։
Այնուհետև բերում են մսավաճառներից չափազանց
աննշան վճարով եղի ու գոմէշի զլուխներ—ու զեզ-
ները. լեզուները և աչքերը հանած, կաշին մաքսւր
քերթած—լոկ սոկրները։ Ամէն որ մի քանի այդ-
պիսի զլուխ ջարդում են կացիններով և լցնում
կաթսայի մէջ, եփում, եփում։

Ահա մեք կերակուրք :

Սակայն բանտում մտածում էին նաև մեր «հո-
դու փրկութեան» մասին։

Չորեքշարիթի և ուրբախ օրերը «բօրչչ» չէին
տակիս ուտենու, այլ սիսեռով պատրաստած մի տե-
առկ ապուր, որը չէր մարտում։ Եւ, չկարծէք թէ
սիսեռն էլ առատ էր—ամենեւին։ Չորեքշարիթի և
ուրբախ օրերը մի կատաղի ձկնորսութիւն էր մեր
կերակուր ուտելը։ Դգալներն առած, սկսում էինք
օրսեռ օրսալ։ Այդ անիրաւներն էլ իրենց դատարկ
շապիկները թողնում էին լող օլու ջրի երեսին, իսկ
իրենք իջնում էին առկը, թաղնուում։ Երբ դգալոց
տակից էիր զարնում, որ սիսեռ բռնես, չարաճճի
դեղին զնտակները վեր էին բարձրանում և արագ
լոգում օմանի պատերին քուելով։ Ահա այդ ժա-
մանակ օգտում էին աւելի ճարպիկ ձկնորսներից
գգալները կոխում կերակրի մէջ, 2-3-4 սիսեռ բրո-

հայութեա, կատակելով ու քրքջակով. բնրանները
ապահովում :

Խելք երեք բժիշկները — Օհանջանեան, Աթա-
րականան և Մնացականեան — նստած՝ անդերջ հայի-
նեն ամեռում : Թէ օքական ամէն մէկս որքան կալօրի
մնաց կըանում և զեռ որքան է պէտք՝ նորմակ կեան-
գի հաւաքար :

Մառան եկաւ ամանը և հացի փչրանքները տա-
ճեղըն :

Վերակացուն նայեց մեր կերակրի ամանի մէջ և
առնառու, որ երեք-քառորդը տեղն է .

— Հը , չախորժեցի՞ք, — ասադ նա ծիծագելով . —
Կը պարթիւիք, կուտէք, — աւելացրեց թունաւոր
ձեւագի և գուռը փակեց :

Կէս օրից հազիւ Զ ժամ անցած, կրկին դուրս
առաջան մեզ պատյանի և բնական պէտքերը կատա-
րեցու :

Այս անդամ էլ որոնեցինք աչքերով և մեր ծա-
ռաթիւներից մի երկուար տեսանք : Այս անդամ էլ
վերակացուն մեզանից չեմ յիշում որին՝ ապասնաց
կարցեր տանել . եթէ զրօսանքի ժամանակ նշաննե-
ցամի ու ձեւերով խօսի ուրիշ կալանաւորների հետ :

— Եարող էք միայն բարեւել, իսկ այդ խորա-
մանկ նշաններով խօսել, բան հասկացնել չէ՝ կարե-
քի, — հրամայեց նա, ամէն մի լառից յետոյ մի
հայեցանք կպցնելով :

Քամն բոպէ պատյտից յետոյ, փակեցին, տակով
մէսց չոքս խոտէ ներքնակ և չորս խոտէ բարձ : Եւ

ցերեկւայ ժամ 2³/₂ ից կամ 3ից մինչեւ հետեւապ
առառօտայ 8-9 ժամը պէտք է վակւած միաս խցի
ամէն ինչ կատարելով այստեղ զրւած պարագանի
մէջ, կամ փոքրիկ տակարեկի մէջ... Աւ այդ ոչն
է, որ պիտի չնշես...

Եթէրքնակները շաբեցինք իրար քով և սենեակի
ամբողջ լայնութիւնը լիապէս բռնւեց : Ազատ անոց
միաց ուզիգ 1-1¹/₂ քայլ զէպի զուոք :

Սաւան ու ներմակնեղին արդին տեղ էին մնալ
Ար մեծկակ սաւան ունէի . փաեցինք այդ սաւանը
և նա ծածկեց մեր չորս ներքնակները և մի քիչ էլ
զեռ առելացաւ : Ահա ինչ որքան էր մեր ներքնակ-
ների լայնութիւնը : Ներմակներս առանք ու պառ-
կեցինք :

Բարձերի կոչտ խռաերը ծակում էին երեսս ու
ականջս : Տեղս նեղ էր, խիստ նեղ : Աջ էի շապահ-
ում թժշկին էի անհամագուստացնում, ձախ էի շաղա-
ռում՝ Սահակեանին էի քնահարամ անում :

Յոզնած ու սառապած, քուն մտայ :

Աւ քնիս մէջ անվերջ կրկնում էին Ռուսանցից
մինչեւ Նօվօչերկասկի բանաց գալու մեր զիւացին
թափառները, կրկնում էին զգեստաւորման տեսաս-
րանները, մեր կրած արհամարհանքն ու սատրուս-
ցումը, զուտկան սուրբները, Սալսիկի, լսկիր կեր-
պարանքը, Մելքնիկեսնի աժգոյն, անտարբեր և ա-
րինոս զէմքը : Շարան-շարան գալիս էին այդ
պատկերներն իրար ետեւից, և ես վերապրում էի
այն սոսկալի զիշերւայ տառապանքները :

ԱՌԻ, այն գիշերը . . .

Եւ աբովանեաւ երբեք, երբեք մտքից չի հեռանում այն սեւ զիշերը։ Դամենի է ուզեղիս մեջ երեսը ու հասաւ աեզի պէս և ծակում, փորում է հոգիս։

Տառարանքի դիշեր, գնա՞ս՝ Էլ յետ չպա։

Դ. ԽՈՎՃԵԿԻ

1911 Նոյեմբեր,

Վ. Ե. Բ. Զ.



4. ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԳԻ ՀԵՏՄԱՆ ԿՐՈՎԵՐԸ

- 3) Գիշեական բարձրացում. Կը է այս. և
4) Եղանակ կ օգտագործելը. 6 և

96 60 ФУРН

238

0074023

2013

